

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ  
ՅՈՉԱԿԵԼՈՒ 1700-ԱԱՅԱԿԻ ԱՈԹԻՎ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ ՀԱՅՔՈՒՄ.  
ԱԶԳԱՅԻՆ-ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ  
ՆԱՀԱՆԳՈՒՄ III ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ  
(Ըստ IV դարի սրբոց վկայաբանության)

ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆ

Սույն աշխատության ստեղծման համար ես պարտական եմ Սանկտ-Պետերբուրգի Պետական էրմիտաժի բյուզանդական արճճե կնիքների հարուստ ժողովածուի երկարամյա հետազոտող բյուզանդագետ Վ. Ս. Շանդրովսկայային: Նա հիշյալ թանգարանի սրբոց եվստրատիոսյանց պատկերով XI դարի երկրորդ կեսի բյուզանդական արճճե կնիքներին նվիրված հոդվածով (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդեսի» ներկա համարը), մեզ հնարավորություն ընձեռեց անդրադառնալու սույն աշխատության վերնագրում արտահայտված հարցերին: Վ. Ս. Շանդրովսկայան բյուզանդական հայազգի գործիչների արճճե կնիքներին նվիրել է բազում հոդվածներ: Մեր ուսումնասիրությունը, ինչպես ընթերցողը կհամոզվի, դուրս է եկել հիշյալ սրբերի կյանքի ու գործունեության մասին շարադրանքի շրջանակից, լուծում է բազում հարցեր, բարձրացնում նորերը:

Առաջին հարցը, բնական է, վերաբերում է քրիստոնեության տարածմանը Փոքր Հայքում III դարի երկրորդ կեսին: Սկսած V դարից, հայ գրի ստեղծման ժամանակից մինչև օրս, քրիստոնեության մասին Հայաստանում շատ է գրվել, սակայն բոլոր աղբյուրները և ուսումնասիրությունները անգրագառնում են Մեծ Հայքին, կարծես Փոքր Հայք գոյություն չի ունեցել, հայեր այստեղ չեն եղել: Ազաթանգեղոսը՝ Հայաստանում հաղթանակած նոր կրոնի հիմնական աղբյուրը, նկատի ունի Մեծ Հայքը, Արշակունյաց թագավորությունը: Միայն առաջին անգամ, երբ ուղում է

1 Неизвестные печати Аарона: магистра у дуки Иверии и Великой Армении, проедра и дуки. Сообщения Государственного Эрмитажа вып. XXXVII 1973, с. 60—64; К истории армяно-византийских отношений XII в. По данным сфрагистики. — «Լրաբեր հաս. գիտ.», 1974, № 7, Эрмитажные печати Филарета Врахамия (Варажнуни). — «Լրաբեր հաս. գիտ.», 1975, № 3, էջ 36—49; Неизвестный правитель Византийской фемы Иверия. — «Լրաբեր հաս. գիտ.», 1976, № 9, էջ 79—86, Печати армянских деятелей XI—XII вв. и правителей Васпуракана. Четвертый международный симпозиум по армянскому искусству. Тезисы докладов. Ереван, 1985, с. 305—306; Վ. Ս. Շանդրովսկայա, Վ. Ս. Քարթիկյան. Հայերեն արճանագրությամբ բյուզանդական արճճե կնիք Պետական էրմիտաժի ժողովածուում. — «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1991, № 1, էջ 122—128: К истории фемы Васпуракан. — Византийский временник, т. 55(80), 1994, с. 152—161.

ցույց տալ, որ քրիստոնեությունն ամբողջությամբ ընդգրկել էր Հայաստանը, հիշատակում է, իր պատկերացմամբ, Հայաստանի ամենաարևմտյան քաղաքը՝ Սատաղը<sup>2</sup>: Եվ երկրորդ անգամ, երբ գրում է Կեսարիայում ձեռնադրված Գրիգոր Լուսավորչի վերադարձի ժամանակ նրա Սերաստիայում կանգ առնելու և այնտեղից իր հետ հայ հոգևորականներ Մեծ Հայք բերելու մասին<sup>3</sup>: Տառացիորեն ընթացիկ տարում, քրիստոնեության 1700-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի կադավերյալ «Հայոց սրբերը և սրբավայրերը» խորագրով հոբելյանական սեսիայի նյութերում (որոնք լույս տեսան առանձին գրքով, նույն վերնագրի տակ), Փոքր Հայք գոյություն չունի՝ ոչ սրբեր, ոչ սրբավայրեր<sup>4</sup>: Պողոս Սնանյանը, որ Հայաստանում քրիստոնեության տարածմանը նախքան Գրիգոր Լուսավորչի քարոզչությունը, հատուկ ուսումնասիրություն է նվիրել, Աշտիշատից, Բարձր Հայքից արևմուտք չի գնում<sup>5</sup>:

1. Սրբոց Եվստրատիոսյանց վկայաբանության հայերեն հրատարակությունների մասին: Գրանց առնչակցությունը Սիմեոն Մետափրաստեսի հունարեն բնագրի հետ

Դիոկլետիանոս կայսեր օրոք (284-305 թթ.) նահատակված սրբոց Եվստրատիոսյանց՝ Եվստրատիոսի, Ավքսենտիոսի, Եվգենիոսի, Օրեստեսի և Մարգարիոսի վարքն ու վկայաբանությունը մեզ անհայտ հեղինակի կողմից գրվել է հունարեն IV դարի առաջին կեսին: Հունարենից թարգմանվել է հայերեն V դարում, ամենայն հավանականությամբ, սրբոց թարգմանչաց կողմից, և իրենից ներկայացնում է նախասկզբնական տարբերակը: Հայերենի համար բնադիր հանդիսացած հունարենը չի պահպանվել: Մեզ է հասել X դարի բյուզանդական նշանավոր վարքագիր Սիմեոն Մետափրաստեսի խմբագրությունը: Ուստի հայերեն թարգմանությունը փաստորեն իրենից ներկայացնում է նախագաղափար օրինակը և նրա հիման վրա հնարավոր է պատկերացնել Մետափրաստեսի կատարած խմբագրական աշխատանքը: Վերջինիս աշխատանքի մասին շատ դիպուկ գրել է Ն. Սկինյանը. «Սիմեոն Մետափրաստես Թ գարուն (C) կատարած է հույն վկայաբանության համար այն խանգարիչ դերը, զոր ապա փոքր տարբերությամբ Գրիգոր Մերենց խաղացած է հայ Հայսմավուրաց համար: Հնագույն վկայաբանությունները համառոտած կամ ընդարձակած է ըստ կամի հավելվածներով և նմանյոք»<sup>6</sup>: Համեմատելով սրբոց Եվստրատիոսյանց վկայաբանության V դարի մեր թարգմանությունը Մետափրաստեսի խմբագրությամբ

2 Ագաթանգեղոս Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց. Տփղիս, 1909, էջ 439-440:

3 Նույն տեղում:

4 Արդեն քրիստոնեացած Փոքր Հայքում տարածված աղանդների մասին գրել է Լ. Ս. Խաչիկյանը (Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դ.). Երևան, 1951), բայց գա ոչ ժամանակով և ոչ բովանդակությամբ չի առնչվում մեր հետազոտության նյութին:

5 Պ. Ա ն ա ն յ ա ն. Քրիստոնեության հետքեր Հայաստանի մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզչությունից առաջ (Պատմական ուսումնասիրություն). Վենետիկ, 1979:

6 Ն. Ա կ ի ն յ ա ն. Նյութեր հայ վկայաբանության ուսումնասիրության համար. Վիեննա, 1914, էջ Գ:

յան հետ, նկատում ենք, որ նրա «խանգարիչ» գործունեությունը այստեղ այնքան էլ սարսավելի չի եղել:

Միմեոն Մետափրաստեսի կազմած բնագիրը XVI դարում լատիներեն է թարգմանել Լավրենտիոս Սուրիոսը (1522-1578 թթ.):

V դարի հայերեն թարգմանությունը Վենետիկում հրատարակվել է երկու անգամ, նախ Մկրտիչ Ավգերյանի կողմից՝ 1813 թ., ապա 1874 թ., հայտնի չէ ում աշխատասիրությունը: Երեք էջից բաղկացած առաջաբանում ոչ մի անուն չի հիշատակված:

Մ. Ավգերյանը խնդրո առարկա վկայաբանությունը տվել է հետևյալ խորագրերը. «Վկայաբանություն սուրբ և փառալուրեալ ճգնագգեաց վկայիցն՝ Եւստոտիոսի, Եւդինէոսի, Աւքսենտիոսի կամ Օգսենտիոսի, Ուրբեստի կամ Ուրբեստէսի, և Մարդարիոսի, որ և Մարդայր, կամ Մարտայր (այսինքն՝ այր արի)»: Վկայարանություն վերնագիրը ձեռագրերում այդպիսին չէ: Անձնանունների կրկնակի հիշատակությունը և Մարգարիոս «անվան» ստուգաբանությունը պատկանում են Մկրտիչ Ավգերյանին:

Վենետիկի Մխիթարյանների 1874 թ. հրատարակությունը ավելի ստույգ է, հետևում է ձեռագրերի ընթերցվածներին, ղուրկ է բացատրություններին և ստուգաբանություններին և ուսումնասիրության համար, անտարակույս, նախընտրելի է:

Կանգ առնենք V դարի հայերեն թարգմանության վրա: Այն սուրբ թարգմանչաց գրչին վերաբերելու մասին վկայում են ոսկեղենիկ լեզուն և թարգմանության սկզբունքները, որոնք հար և նման են Նոր Կտակարանի հայերեն թարգմանության լեզվին և սկզբունքներին: Դեռևս Գարեգին Ջարպահանյանը այդ առթիվ գրել էր. «Հարանց վարուց՝ կամ անգ զանազան մասանց՝ յորոց ձևացած է, կրկին թարգմանությունք եղած են և կան մեր մատենագրութեան մէջ, յորոց մին հնագոյն և ազնուագոյն ոճովն և բովանդակութեամբ<sup>8</sup>, և միւսն աւելի նոր գարուց մէջ եղած և մեր գայրութեան արծաթի դարուն վերաբերելով, և անկէ ալ ասդին. որովհետև Լամբրոնացոյն ժամանակ և իր ջանքերով եղած կաւանգուի վերջին կարգաւորութիւն և դասաւորութիւն գրոցս: Նախնական թարգմանութեան քանի մը կարևորագոյն հատուածք՝ ինչուան հինգերորդ դարու հնութեան կելլեն լեզուն և ոճն ալ զայն կը հուշակեն»<sup>9</sup>:

Հենց վերջերս կատարելով չորս Ավետարանների և Գործք Առաքելոցի հայերեն թարգմանության համեմատությունը հունարեն բնագրի հետ, համոզված կարող եմ կրկնել ու պնդել, որ, իրոք, մեր վկայաբանություն թարգմանությունը հունարենից կատարվել է Հենց V դարում:

Ինչ ցույց տվեց վկայաբանություն 1813 և 1874 թթ. հրատարակությունների համեմատությունը: Մկրտիչ Ավգերյանը հավատացյալ ընթերցողներին է հասցեագրում իր հրատարակությունը: Առանց հատուկ նշելու, վկայաբանության բնագրի մեջ նա կատարում է բազում ընդմիջար-

7 Լիակատար վարք և վկայաբանությունք սրբոց, որք կան ի հին Տօնացոյցի եկեղեցոյ Հայաստանեայց: Ծօրինեալ վաւերական բանիւք ճառորնորաց մերոց և այլոց ազգաց, հանդերձ ծանօթութեամբք ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեանց. հ. թ. Վենետիկ, 1813:

8 Սուլյն հոգւածում, եթե հատուկ չի վերագրված, բոլոր ընդգծումները մերն են:

9 Գ. Ջ ա ռ պ հ ա ն ա լ ե ա ն. Մատենադարան հայկական թարգմանութեան նախնեաց (դար Դ-ԺԳ). Վենետիկ, 1889, էջ 539:

կուլթյուններ, տալիս հունարեն տերմինների բացատրություններ, որպես կանոն հենվելով ոչ թե Մետափրաստեսի հունարեն բնագրի, այլ Սուրիոսի լատիներեն թարգմանության վրա<sup>10</sup>, այն էլ իտալերեն արտասանությամբ:

Միմենոն Մետափրաստեսն ունի. 1) Դիոկլետիանոս կայսրը ոմն դուքս Լյուսիասի նշանակեց «παντων των λιμιτανων ἐπιτροπευειν», այսինքն՝ ղեկավար՝ հրամանատար (բոլոր լիմիտանոսների): Լիմիտանոս լատիներեն limitaneus նշանակում է սահմանապահ, սահմանապահ զորք: 1874 թ. հրատարակության մեջ լատիներեն տերմինը «բացատրված» է, չի թարգմանված, քանզի, հավանաբար, V դարի թարգմանիչները նրան հարմար բառ չեն գտել, բայց քանի որ նրանք սկզբունք ունեին իրենց թարգմանության մեջ ինչքան հնարավոր է օտար բառ չօգտագործել, պարզապես նշանակել են «ի դքսուլթին զիլխանութինն»:

Մկրտիչ Ավգերյանի հրատարակած բնագրում ասված է. «ի գքսուլթին համօրէն սահմանացն այնոցիկ իբրև մարզպան կուսակալ և զօրավար՝ որ ի հռովմայեցւոց կոչէր տուքս լիմիտանէուս, որպէս թէ սահմանապետ, և կոչէին ձեռն լիմիտացի, այսինքն սահմանագունգ»: Նա ոչ միայն տերմինն է բերում լատիներեն արտասանությամբ (լիմիտանէուս), այլև մանրամասն բացատրություն է տալիս:

2) Մետափրաստեսի բնագրում ասված է, որ Եփսոսիտիոսը «ἐκελευον τον ενιαυτον κομηνταρήσιον ὑπαρχειν», այսինքն տվյալ տարում նա վարում էր կոմենտարեսիոսի զինվորական պաշտոնը: Այնուհետև՝ «Εὐστράτιος κομηνταρήσιος εἶπεν»- «Եփսոսիտիոս կոմենտարեսիոսն ասաց»:

1874 թ. հրատարակված բնագիրը հետևում է նույն սկզբունքին՝ օտար բառը «թարգմանել», չբերել օտարահունչը: Եփսոսիտիոսը «յամին յայնմիկ իլխան էր ի վերայ ամենայն զօրացն»:

Ահա և Մ. Ավգերյանի հրատարակությունում. «Եւստոատիոս էր յամին յայնմիկ ոստիկան կալանաւորաց, և գլուխ զօրականին իբրև համարակալ և գալիր յիշատակաց՝ կոչեցեալ ի հռովմայեցւոց գօմէնտարիէնդիս» (լատիներեն արտասանությամբ):

3) Սրբոց թարգմանչաց սկզբունքը հանգես է գալիս և այլ գեպքերում: Այսպես. հունարեն բնագրի «Εὐστράτιος τις σκριναρίος τῆς δουκικῆς ὑπαρχων ταξέως» («Ոմն Եփսոսիտիոս, որ գքսական գնդի սկրինիարիոսն<sup>11</sup> էր»), հայերեն թարգմանվել է. «Եւստոատիոս ոմն էր իլխան յայնմիկ ի դասուց Լիւսիայ բղեչխին»<sup>12</sup>:

10 Vitae Sanctorn orient. et occident (վեց հատորով՝ 1569–1575).

11 Այս և մնացյալ հունահռոմեական տերմինների բացատրությունը հատուկ տրվում է հոդվածի վերջում:

12 «Բղեչխ» թարգմանությունը, հարկավ, սխալ է: Լյուսիասը ամենևին էլ բղեչխ չէր: Նման սխալ հանդիպում է և Գործք Առաքելոցի հայերեն թարգմանության մեջ (13.7, 13.8, 13.12, 18.12), ուր ανθυπατος-ը (լատ. proconsul) թարգմանված է «փոխանակի բղեչխին»: (Այդպես և Եփսոսիտիոսի Կեսարացու Եկեղեցական պատմության հայերեն թարգմանության մեջ: Եւսեբիոսի Կեսարացու Պատմությունն Եկեղեցույ յեղեալ յասորոյն ի հայ ի հինգերորդ դարուն: Պարզաբանեալ նոր թարգմանութեամբ յոյն բնագրէն ի ձեռն Չ. Աբրահամ վ. Ճառեան, ի Վենետիկ, 1874, էջ 665): Հայերեն թարգմանվել է իր ժամանակին հայտնի «բղեչխ»: Արտաշիսյան և Արշակունյաց Հայաստանում բղեչխները չորս «կողմնապահներն» էին, թագավորության աշխարհագրական չորս մասերի ռազմաքաղաքական ղեկավարները: Գահնամակում դասվել են թագավորից անմիջապես հետո իբրև դահերեց

4) Մ. Ավգերյանը հատուկ անունները ևս բերում է՝ օգտվելով վկայաբանությունների թարգմանությունից: Եվստրատիոսի հայերեն անունը ըստ հունարեն բնագրի Κυριστικής (Կիրիսիկէս) էր, Ավգերյանը կարգում է Չիրիսիկէս, ասել է՝ իտալերեն արտասանությամբ:

5) Հայ թարգմանիչը, չցանկանալով հունարեն Πραιτώριον (լատ. praetorium) բառն օգտագործել, տալիս է նրա «թարգմանությունը»՝ «ապարանք իշխանին»: Նկատենք, որ Πραιτώριον-ը «ապարանք» են թարգմանել սուրբ թարգմանիչները (տե՛ս Ավետարան ըստ Մատթեոսի 27.27, ըստ Հովհաննու՝ 18.28, 18.33, 19.9, Գործք Առաքելոց՝ 23.35):

6) Հռոմի կողմից Փոքր Հայքի (և Կապադովկիայի) կառավարիչ նշանակված Ագրիկոլայոսի «հեգեմոն» (ἡγεμών) կոչումը հայերեն վկայաբանություն մեջ թարգմանված է «դատաւոր»: Հեգեմոնը գլխավոր դատավորի իրավունքներն ուներ, բայց հունարեն տերմինը՝ «հեգեմոն» դատավորի նշանակում: Հրեաստանի կառավարիչ Պիղատոսի «հեգեմոն» կոչումը նոր Կտակարանում էլ «դատաւոր» է թարգմանված («ետուն (Քրիստոսին) ի ձեռս Պոնապոլոյ Պիղատոսի գատաւորի») (Ավետարան ըստ Մատթեոսի, 27.2): Հունարեն բնագրում Παρέδωκαν Πιλάτῳ τῷ ἡγεμόνι: Ἰουδαίαις Ավետարանում (3.1)՝ «ἡγεμονεύοντος Ποντίου Πιλάτου τῆς Ἰουδαίας»: Թարգմանված է. «ի դատաւորութեան Հրէաստանի Պիղատոսի Պոնտապոլոյ»:

Այսպիսով, σκρινιάριος-ի «բդեշխ» թարգմանությունը, Πραιτώριον-ի՝ «ապարանք», ἡγεμών-ի՝ «գատաւոր», և գրանց համապատասխանությունն ու համընկնումը սրբոց թարգմանչաց թարգմանությունների հետ, մեզ թույլ են տալիս ենթադրելու նրանց մասնակցությունը վկայաբանության թարգմանությունը:

7) Վերջապես կանգ առնենք և Մ.Ավգերյանի մի ընդմիջարկության վրա ևս: Դուքս Լյուսիասի Եվստրատիոսին ուղղված այն հարցին, թե ո՞վ է նա և որտեղի՞ց է սերում, Եվստրատիոսը պատասխանում է. «Ἐκ τῆς Ἀραρακηνῶν ὠρημαὶ πολίχνης, Εὐστράτιος τοῦνομα, Κυριστικῆς τῆν ἐπισημίαν, τῆ ἰπατρῶα διαλέκτῳ» («Սերում եմ ես Արավրակա քաղաքից, անունս Եվստրատիոս է, ըստ հայրենի բարբառի՝ Կիրիսիկէս մականվանյալ»): 1874 թ. հրատարակությունում կարգում ենք. «յԱրաւրակացւոց քաղաքէն եմ ես՝ ազգաւ և տոհմիւ, և անուն իմ Եւստռատիոս կոչի»: Մ. Ավգերյանի հրատարակած բնագրում. «յԱրաւրակացւոց քաղաքէն եմ ես՝ ազգաւ և տոհմիւ. և անուն իմ Եւստռատիոս կոչի. և ըստ հայրենի բարբառոյ հայկաղանցս Տէր Յուսիկ ձայնեալ, զոր Յոյնք կիռ Իւսիկ (կամ Գիռ Իսիկէս) կարդան...»: Ընդգծվածը Մ. Ավգերյանի ավելացրածն է:

Որտեղի՞ց է Մ. Ավգերյանը ստացել «հայկազանց բարբառը»: Դժվար է այն որոշել: Սրբերից Մարգարիոսը, իր տան տանիքից տեսնելով շղթայակապ տարվող Եվստրատիոսին, ասում է իր կնոջը՝ «τῆ Ἀρμενίων διαλέκτῳ. Ὁρᾶς, ὦ γύναι, τὸν κύριον τῆς περιοικίδος ἡμῶν» (սյունակ

Իշխաններ: Ըստ Ագաթանգեղոսի՝ Տրգատ III-ին Հռոմ ուղեկցողների մեջ էին «ի գինուրական կողմանէն դէորեսին գահերեցսն իւրոյ տաճարին, որ բգեաշխքն կոչին» (Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 459):

480)<sup>13</sup> «ասում է կնոջը հայերեն լեզվով: Տեսնու՞մ ես, ով կին, մեր շրջանի տիրոջ»): Նրան մի փոքր անց անվանում է *Κυριστική*, կոչականով *Δεσπώσουσε Κυριστική* (սյունակ 481), *Κυρίε μου Κυριστική* (սյունակ 484) - «Տեր իմ Կիրիսիկես»: Առանձին ձառնտիրներում «Կիրիսիկես» անունը բացակայում է, տրված է զրա հայերեն թարգմանությունը: Օրինակ 1404 թ. արտագրված ձառնտրում (*Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1520 ձեռագրի թերթ 193*), ուր տրվում է սրբոց Եփսոսապետի և Մարտիրոսյանց համառոտ վկայարանությունը, Եփսոսապետի բնիկ անունը մշտապես «տէր Յուսիկ» է բերված: Նույնը հանդիպում է նաև Հայսմավուրքներում: «Քաղոցի բ և դեկտեմբերի ժգ»-ի տակ շատ ավելի համառոտ բերված է «Վկայարանութիւն սրբոց Եւստոսապետեանց մարտիրոսացն», ուր մեզ հետաքրքրող նախադասությունն այսպիսին է. «էր սուրբն Եւստոսապետս ի քաղաքէն Արօկայ՝ որ արդ կոչի Արզընցիք՝ պատուով ի դքսական կարգէն ի հարկևորացն: Եւ էր հայրենական անուն նորա Տէր Յուսիկ...»: Անդրադառնալով Մարգարիտի իր կնոջ հետ ունեցած խոսակցությանը, մի անգամ ևս հանդիպում է «Տէրն մեր Յուսիկ» գարձվածքը (տե՛ս «Գիրք որ կոչի Այսմաւուրք»... 1730, էջ 242, 243):

Օրինակները կարելի է բազմապատկել, բայց ասվածն էլ բավական է ցույց տալու համար, որ զիտական աշխատանքի համար Մ. Ավզերյանի հրատարակած բնագիրը չի կարելի օգտագործել: Այն բազում թյուրիմացությունների տեղիք կարող է տալ:

Արդ, ի՞նչ հարաբերություն մեջ է գտնվում վկայարանության հայերեն թարգմանությունը Սիմեոն Մետափրաստեսի հունարեն բնագրի հետ:

Եթե մենք համոզված ենք, որ մեր ձեռքում եղած V դարի հայերեն թարգմանությունը կատարվել է IV դարում իրականացված հունարենից և արտահայտում է սկզբնական բնագիրը, ապա X դարի հունարեն խմբագրությունը, թեև հետևում է նախնական հունարեն բնագրին, ունի առանձին տարբերություններ, որոնք Սիմեոն Մետափրաստեսի խմբագրության արտահայտությունն են<sup>14</sup>:

Այսպես, նախ և առաջ քրիստոնյաների գեմ հալածանքներ ձեռնարկած կայսրի կամ կայսրերի մասին: Հայերեն թարգմանությունը ցույց է տալիս, որ «ի սոյն իսկ ժամանակի համբաւ իմն հասանէր ի լսելիս անօրէն իշխանին իբրու թէ ամենայն աշխարհն Հայաստանեաց և Կապպադովկիա ընդզիմամարտ եղեն թագաւորական հրամանին, և միաբանութեամբ յապստամբութիւն իմն թեակոխեն» (էջ 436)<sup>15</sup>: Հարկավ, «անօրէն իշխանին» բառերի տակ ենթադրվում է Դիոկլետիանոս կայսրը: Աիմեոն Մետափրաստեսի տեքստում այստեղ «իշխան» չէ, եզակիում չէ, հանվան չեն հիշված, բայց ենթադրվում են Դիոկլետիանոսն ու Մաքսիմիանոսը («τοὺς τυράννοις

13 «Սյունակի» ասկ ենթադրվում է "J.P. Migne-ի Patrologia graeca-ի 116-րդ հատորում լույս տեսած Եփսոսապետի վկայարանության բնագրի սյունակը: Եթե նշվում է «էջը», ապա խոսքը վերաբերում է 1874 թ. հայերեն թարգմանության հրատարակության էջին:

14 Վկայարանության հունարեն վերնագիրը ըստ Մետափրաստեսի այսպիսին է. "Αθλησις των άγιων μαρτυρων Ευστρατιου, Αύξεντιου, Ευγενίου, Μαρδαρίου και Όρεστου. J.P. M i g n e. Patrologia cursus completus, series graeca. T. 116, col. 467-506.

15 Այսուհետև փակագծերում հայերեն թարգմանության էջերը ըստ 1874 թ. հրատարակության:

ΤΟΥΤΟΙΣ - «այս բռնակալներին»): Երկու բնագրերը չեն համընկնում և տեղանունների հարցում: Եթե հայերեն թարգմանությունը ցույց է տալիս, որ նոր կրոնը բռնել էր «ամենայն աշխարհն Հայաստանեաց», այս Միմեն Մետափրաստեսը գրում է «*ἅπαντα ἡ Μεγάλη Ἀρμενία* - «ամենայն Մեծ Հայքը» (սյունակ 468)<sup>16</sup>: Այս մասին հատուկ կիսովի, այստեղ նշենք միայն, որ Մետափրաստեսը «ուղղում է» բնագիրը, ելնելով իր ժամանակի (X դար) իրականությունից, երբ գոյություն ունեւ մեկ Հայաստան՝ Մեծ Հայքը (Μεγάλη Ἀρμενία), Բագրատունիների թագավորությունը: Մնացյալում երկու բնագրերը համընկնում են՝ «միաբանութեամբ յալստամբութիւն իմն թեակոխեն» - «*εἰς ἀποστασιαν ὁμοφρονως παντες ὁρωσιν*»: Մի փոքր անց ցույց է տրված, որ նման լուրը «լուեալ Դիոկղիտիանոս խռովեցաւ ի սրտի իւրում»: Նույնը և Մետափրաստեսի մոտ «*εταραχθη ἐπι τουτοις ὁ Καῖσαρ Διοκλητιανος*»:

Դիոկղիտիանոս կայսրը, լսելով «Համայն Հայաստանը» քրիստոնյա դառնալու լուրը, «հրամայէր գմեծամեծս իւր առ ինքն կոչել... և գերիս աւուրս յառաւօտէ մինչև յերեկոյ... ի խորհուրդ մտեալ հաստատեցին ի միտս իւրեանց փոխադրել զկողմնակալսն զայնոսիկ՝ որք կարգեալք էին ի վերայ երկաքանչիւրոց ազգացն այնոցիկ (*ἑκατέρων τουτων των εἶθων*)» - «յուրաքանչյուր այս ազգաց», որ ավելի ճիշտ է և, հարկավ, ավելի կարևոր: Հունարենում «որք կարգեալք էին բառերը» չկան), վատշուէրս և անարիս գնոսա կարդալով: Եւ փոխանակ նոցա առաքեաց երկուս, որ եկեալ էին ի Հելլենացւոց գաւառէն... որ մին ի նոցանէ Լիւսիսա ճանաչիւր որ ամենայն Զեմենտացւոց գաւառին ունէր ի դքսութիւն զիշխանութիւնն, երկրորդն որ կոչէր Ագրիկոլայոս, որ զամենայն աշխարհաց զդատաւորական իշխանութիւնն ընձեռնեալ էր, և զգինուորութիւն ամենայն գնդիցն որ ի մէջերկրեայսն և ի մերձակայ գաւառսն (հունարենում ΠΟΛΕΣΙ - քաղաքսն) բնակեալ էին»:

Հայերեն բնագրում Լյուսիսի վարած սլաշտոնը («Զեմենտացվոց գավառի դքսութիւնը») հստակ չէ, ավելի հստակ է Ագրիկոլայոսինը (նշենք, որ Լյուսիսս անունը հունական է, Ագրիկոլայոսը՝ հռոմեական, ենթադրենք, որ մեկը հույն էր, մյուսը՝ հռոմայեցի): Ագրիկոլայոսի սլաշտոնը ավելի բարձր էր, նա վկայաբանութեան բնագրի այլ տեղում կոչված է հեգեմոն և դատաւոր (հասկանալի է գերագույն):

Այս հատվածի առնչությունը ուղադրության արժանի է կապագովկացվոց և հայոց ազգերի (էթնոսների - հունարեն բնագրում ἔθνη) հիշատակությունը և այդ «ազգաց» բնիկ ղեկավարություն<sup>17</sup> և նրանց պաշտոնանկ արվելու փաստը:

Վկայաբանության հայերեն թարգմանությունը այնքան հստակ չէ այստեղ. «Արդ հասանելով սոցա ի գաւառսն յայնոսիկ» (էջ 436), այսինքն Կապագովկիա և Հայաստան: Մ. Ավգերյանի հրատարակած բնագրում «Արդ ի հասանել սոցա անդր» (էջ 483): Այստեղ Լյուսիսի և Ագրիկոլա-

16 Նշվում են հունարեն բնագրի սյունակները ըստ J. P. Migne հրատարակության:

17 Նման դարձվածք Մովսես Խորենացու մոտ «յազգէ բնիկ» (Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Մ. Յարութիւնեան. Տիֆլիս, 1913, էջ 311):

յոսի տեղ հասնելու փաստն է արձանագրված: Միմեոն Մետափրաստեսի ընդհիրը ավելի հստակ է. «ἐπιστάντων οὖν αὐτῶν ταῖς ἐπαρχίαις ταύταις» (սյուլեակ 469), այսինքն, «երբ սրանք նշանակվեցին գլխավորելու հիշյալ նահանգների (կառավարումը)», «յազգէ բնիկ» ղեկավարների պաշտոնանկ արվելուց հետո<sup>18</sup>:

Լյուսիասը հաստատվեց Փոքր Հայքի Սատաղ քաղաքում, իսկ Ագրիկոլայոսը՝ Սեբաստիայում, և հիշվում է որպես ἐπαρχία-յի նահանգի կառավարիչ: Ե՛վ Աստաղը, և՛ Սեբաստիան Փոքր Հայքում էին գտնվում: Կապադոկիայի բնիկ հեգեմոնի պաշտոնանկությունից հետո վկայաբանության մեջ նրան փոխարինողի մասին խոսք չկա, պիտի ենթադրել, որ սկզբնական շրջանում Ագրիկոլայոսը գլխավորեց երկու նահանգները միասին: Թեև սուրբ Հիերոնի վկայաբանության մեջ ասված է, որ Ագրիկոլայոսը կառավարում էր «Հայոց երկիրը» (Փոքր Հայքը), իսկ Լյուսիասը «Կապադոկիացոց»: Հիշյալ վկայաբանության մասին տե՛ս ստորև, էջ 27:

Անգրագառնանք քրիստոնեությունից ծավալ ստացած տարածքին («ամենայն աշխարհն Հայաստանեաց» - «ἅπανα ἡ Μεγάλη Ἀρμενία» - «ամենայն Մեծ Հայքը»):

## 2. Վկայաբանության մեջ արձանագրված դեպքերի աշխարհագրական տարածքը

Քրիստոնեությունից տարածման մասին Հայաստանում գրում են V դարի հայկական աղբյուրները, որոնք և լայնորեն օգտագործվել են հետազոտողների կողմից: Օտար աղբյուրներից ուսումնասիրողներին հայտնի է Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը»: Նա հարցին անդրադառնում է երկու անգամ: Առաջին անգամ, երբ նշում է Եգիպտոսի եպիսկոպոս Դիոնեսիոս Ալեքսանդրացու (253-255 թթ. միջև) հայոց Մերուժան («Μερουζάνης») եպիսկոպոսին գրած «Վասն ապաշխարութեան» թղթի մասին («Գրեաց դարձեալ Դիոնեսիոս և առ Հայս վասն ապաշխարութեան, որոց եպիսկոպոս էր յայնժամ Մեհրուժան»)՝<sup>19</sup>: Հունարեն բնագրում՝ «καὶ τοῖς κατὰ Ἀρμενίαν ὡσαύτως περὶ μετανοίας ἐπιστέλλειν ὧν ἐπισκόπευε Μερουζάνης»<sup>20</sup>:

Ուսումնասիրողների համար գայթակղություն վեմը (ինչպես կտեսնենք Եվսեբիոս Կեսարացու և երկրորդ հաղորդման առնչությամբ) վերաբերում է «Հայաստան» (Ἀρμενία) տեղանվանը: Մերուժան եպիսկոպոսի նստավայրը ո՞րն էր: Անցնելով առաջ պիտի նշենք, որ մեր համոզմամբ ճիշտ է Ա.Հառնակը, որ ենթադրում է Փոքր Հայքը (Սեբաստիա քաղաքը)<sup>21</sup>: Իր գրքի երկրորդ հրատարակության մեջ, այդ ընթացքում արտահայտված

18 Հայ թարգմանիչը շփոթել է երկու բայ. հունարենի ἐπίστημι (ածական գերբայ) հոգնակի սեռական՝ ἐπιστάντων ἐφικνέομαι-յի հետ: Վերջինս իրոք «հասնել» է նշանակում:

19 Եվսեբիոսի Կեսարացույ Պատմութիւն եկեղեցւոյ..., էջ 517:

20 Eusebii Caesariensis opera. Rec. G. D i n d o r f i u s, vol. IV, Historiae Ecclesiasticae. Lipsiae, 1890, p. 296 (VI, 46).

21 A. H a r n a c k. Mission und Ausbreitung des Christentums in den ersten drei Jahrhunderten. Leipzig, 1902, S. 471.



այլ կարծիքների ազդեցություն տակ, Հառնակը թեև ընդունում է, թե Մերուժանը կարող էր Մեծ Հայքի եպիսկոպոս եղած լինել, բայց և հարց է տալիս. «Բայց մի՞թե այդ ժամանակ այդ երկրում եպիսկոպոս ընդհանրապես եղել է»<sup>22</sup>:

Մերուժանին Մեծ Հայքի եպիսկոպոս են համարում Ն. Ակինյանը և Պ. Անանյանը:

Ա. Հառնակի կարծիքին, թե Մերուժանի նստավայրը Փոքր Հայքի Աերտսիա քաղաքն էր, հակադրվեց Հ. Գելցերը, ելակետ ունենալով խնդրո առարկա անձնավորության Մերուժան անունը: Այն տարածված էր Մեծ Հայքում: Հ. Գելցերին համամիտ էր Ն. Ադոնցը, որը, սակայն, եպիսկոպոսի աթոռը տեղադրում էր ոչ թե Վասպուրականում, ինչպես Գելցերը, այլ Ծոփքում<sup>23</sup>:

Եր. Տեր-Մինասյանը միանում է Հ. Գելցերի կարծիքին և Մերուժանին համարում Արծրունյաց եպիսկոպոս<sup>24</sup>: Հակառակ եպիսկոպոսի աթոռի տեղադրման հարցում բարձրացած վեճին, որը կարևոր է Հայաստանում քրիստոնեության տարածման կոնկրետ շրջանը որոշելու համար, այդուհանդերձ դա արժեքավոր է քրիստոնեության առկայության ժամանակը որոշելու համար՝ III դարի կեսերը: Ելնելով սրբոց Եփեսոսիոսյանց վկայաբանության տվյալներից, ամենահավանականն այն է, որ Մերուժան եպիսկոպոսը գործել է հենց Փոքր Հայքում: Պատահական չէ այն հանդամանքը, որ Գրիգոր Լուսավորիչը 302 թ. Կապադովկիայի Կեսարիա քաղաքում ձեռնադրվելուց հետո վերադարձին «աւուրս ոչ սակաւս» մնաց «ի քաղաքին Սեբաստացւոց»: Լուսավորիչն այնտեղ «գտանէր բազմութիւն եղբարց, զորս հաւանեցուցանէր ընդ իւր գալ, զի վիճակեցուցէ զնոսա ի քահանայութիւն յիւրում աշխարհին (ասել է՝ Մեծ Հայքում - Հ. Բ.) և բազում գունդս դունդս յաճախեալ առնոյր ընդ իւր»<sup>25</sup>: Գրիգոր Լուսավորիչի ձեռնադրած եպիսկոպոսները հիմնականում հունական<sup>26</sup> (և Աստվածաշնչային) անուններ էին կրում. Աղբիանոս (Ἀλβιανός), Եւտաղիոս (Εὐθάλιος), Մովսէս (Μωυσῆς), Եւսեբիոս (Εὐσέβιος), Յովհաննէս

22 A. Harnach. Նշվ. աշխ., Բ հրատ., 1906, էջ 166: Ն. Ա կ ի ն յ ա ն. Դիոնիսիոս Ալեքսանդրացի. Թուղթ Ապաշխարության և Մեհրուժան եպիսկոպոս Հայոց. - «Հանգես անմտորյա», I (1949), էջ 63: Պ. Ա ն ա ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 56-57: Հայաստան ասելով նա ամենևին Փոքր Հայքը նկատի չունի:

23 Н. А. Д о н ц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 347: Նշում ենք բնագիրը և ոչ թե հայերեն թարգմանությունը, որ սխալմամբ Դիոնիսիոսի նամակը թվագրում է 248-265 թթ. (էջ 386), երբ հիշյալ թվերը Դիոնիսիոսի աթոռակալության տարիներն են, իսկ նամակը գրված է 253-255 թթ. միջոցին:

24 Ե ո. Տ եր - Մ ի ն ա ս յ ա ն. Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ. էջմիածին, 1908, էջ 16: Ս. Վ. Կրիվովը հենց վերջերս հրատարակած իր հոդվածում ("Церковная история" Евсевия Кесарийского как источник Мовсеса Хоренаци. - Византийский временник. Т. 59(84), М., 2000, с. 115). Եվսեբիոս Կեսարացու Մերուժանին վերաբերող վկայության շուրջ ընթացած այնքան լուրջ և հանգամանալից վեճին անտեղյակ, փաստը ներկայացնում է որպես նորույթ և գրում, թե դա «Հայաստանի քրիստոնեության մասին շատ կարևոր վկայություն է՝ Հայաստանում քրիստոնյաների մասին շատ կարևոր վկայություն, Հայաստանում քրիստոնեության որպես պաշտոնական կրոն ընդունումից կես դար առաջ»: Նա «Հայաստանի» տակ Մեծ Հայքն է ենթադրում:

25 Ագաթանգեղոս Պատմութիւն Հայոց, էջ 421: Հմմտ. Մ. Օրմանյան. Ագագատում. Հ. Ա, Կ. Պոլիս, 1913, սյունակ 99-100:

26 Հմմտ. Մ. Օրմանյան. Նշվ. աշխ., սյունակ 99-100:

(Γωάννης), Ադապէս (Αγάπιος), Անտիոքոս (Αντιόχος), Կիւրակոս (Κυριακος)<sup>27</sup>, և ամենայն հավանականութեամբ իր հետ Փոքր Հայքից բերված հայազգի «եղբայրներն» էին: Եթէ նրանք հայ չլինեին, քրիստոնյա Հայաստանում ի՞նչ լեզվով պիտի քարոզեին: Բայց սրանց հետ միասին հիշվում են և երեք, հավանաբար ոչ հունական, թերևս հայկական անուններ. Արտիթէս, Արսուկէս, Տիրիկէս անունները<sup>28</sup>, ուստի «Մերուժան» անունը, որ տարածված էր և Փոքր Հայքում չի, բացառված:

Եվսերիոս Կեսարացու երկրորդ վկայութիւնը վերաբերում է քրիստոնյաների դեմ «Արևելից բռնակալ Մաքսիմիանոսի» տաս տարի գործադրած հալածանքներին: Աղբյուրի համաձայն, յուրաքանչյուր քաղաքում սկսեցին հեթանոսական տաճարներ կառուցել, շտապ կարգով վերականգնել ավերվածները, քրմեր հաստատել: Ասել է թե՛ տվյալ սլահին հեթանոսութիւնն արդեն զիջել էր իր գիրքերը, այդ թվում և հռոմեական Հայաստանում: Կայսեր մի հրովարտակում, որով նա ի վերջո թուլատրեց քրիստոնյաներին իրենց աստծուն աղատ պաշտել, նշված է նրա ամբողջ տիրոջոսաշարը. «Ինքնակալ կայսր Գաղերիոս Վաղերիոս Մաքսիմիանոս (հունարեն բնադրում՝ Μαξιμιανός - Մաքսիմիանոս - Հ. Բ.): IX դպրութեան առաջին գլխում ևս Եվսերիոս Կեսարացին նրան անվանում է ὁ ἐπὶ Ἀνατολῆς τυράννος («Մաքսիմիանոս՝ Արևելից բռնակալը»), իսկ նրա հրամանները տարածվում էին համայն Ասիայում: Նույն դպրութեան երկրորդ գլխում նրան դարձյալ կոչում է «τῶν ἐπὶ Ἀνατολῆς ἀρχεῖν μερῶν» («ով նշանակվեց իշխելու Արևելից շրջանների վրա»):

Վիճահարույց է IX դպրութեան ութերորդ գլուխը: Այնտեղ, ի միջի այլոց ասվում է. «...Հանդերձ սոքիմբք (խոսքը տարածված սովի և մահ տարածմի մասին է - Հ. Բ.) յարեաւ և պատերազմ ի բռնաւորէն ընդդէմ Հայոց (ὁ πρὸς Ἀρμενίου πόλεμος) որք ի սկզբանէ անտի բարեկամք և մարտակից էին Հռոմոց. զորս քրիստոնեայս և յերկրպագութիւն ճշմարտին Աստուծոյ փոյթս, նեղելով բռնաւորին ատելւոյն Աստուծոյ զի կրոց և դիւաց զոհեսցեն, փոխանակ բարեկամաց թշնամիս, և փոխանակ նիզակակցաց պատերազմողս ընդդէմ իւր յարոյց զնոսա... Արդ նա հանդերձ զօրօք իւրովք ի պատերազմի անդ ընդդէմ Հայոց ի բազում ուրեք հարեալ վատթարէր առաջի նոցա: Իսկ որ միանգամ ընդ իշխանութեամբ նորա բնակեալ էին ի քաղաքս, սով և մահ սատակէր զնոսա»<sup>29</sup>:

Եվսերիոս Կեսարացու վերոբերյալ պարբերութեան մեջ հիշված «ընդդէմ Հայոց» բառերը ի՞նչ են նշանակում և ինչպե՞ս են մեկնաբանվել ուսումնասիրողների կողմից: Արտաշես Մարտիրոսյանը հետմահու լույս տեսած իր մի հոդվածում<sup>30</sup> նշում է մի շարք հեղինակների կարծիքները: Այսպես, ըստ Ա. Աննինսկու, Եվսերիոսի հաղորդումը չի վերաբերում Մեծ Հայքին կամ բուն Հայաստանին, այլ նկատի ունի Կապադովկիայում, Պոնտոսի մի

27 Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց, էջ 441-442:

28 Հ. Աճառյանը Արտիթէս և Արսուկէս անունների ծագումը անհայտ է համարում (Արսուկէսը թերևս Արսակէս է Արշակ), իսկ Տիրիկէսը կապում է հայերեն տեր բառին (տե՛ս Անձնանունների բառարան, հիշյալ անունները):

29 Եւսերիոսի Կեսարացու Պատմութիւն եկեղեցւոյ..., էջ 688-689:

30 Ա. Մ ա Ր տ ի Ր ո ս յ ա ն. Հայաստանի քրիստոնեական դարձի թվականը, Աշտանակ. Հ. Գ, Երևան, 2000, էջ 15:

հատվածում, Կիլիկիայում և Միջագետքի վերին շրջանում ապրող հայերին<sup>31</sup>: Հ. Մանանդյանը համամիտ է Գ. Ժ. Դյուլենի կարծիքին<sup>32</sup>, համաձայն որի Մաքսիմիանոսը «պատերազմ էր մղել ոչ թե քրիստոնեության դեմ Մեծ Հայաստանի, այլ հռոմեական Հայաստանի, այսինքն՝ Անդրտիգրիսյան երկրներից մեկի դեմ»<sup>33</sup>, ասել է՝ խոսքը աշխարհագրական տարածքի մասին է: Վերջապես Գ. Սարգսյանի կարծիքով կայսրը արշավել է Փոքր Հայքի և Արևմտյան Հայաստանի քրիստոնեական համայնքների դեմ, որոնք հավանաբար անհանգստացնում էին նաև Տրդատին: Հետևաբար 301 թ. առաջ, երբ Տրդատը գեռ հեթանոս էր: Գ. Սարգսյանը այդ արշավանքը դիտում է իբր կայսեր և Տրդատի միջև քրիստոնյաներին ճնշելու համագործակցության օրինակ<sup>34</sup>:

Գ. Սարգսյանը միանգամայն իրավացի է, գտնելով, որ Մաքսիմիանոս կայսեր հալածանքները տեղի էին ունենում Հռոմեական կայսրության կազմում դոնվոլ Փոքր Հայքի քրիստոնյաների դեմ, բայց, հարկավ, դա չի առնչվում գեռու հեթանոս Տրդատ III-ին, ոչ էլ Մաքսիմիանոս-Տրդատ համագործակցությանը:

Ավելի համարձակ ու կատեգորիկ են Ա. Մարտիրոսյանի դատողությունները: «Եթե ուղղակի հայեր է ասվում, — գրում է նա, — ամենից առաջ հասկացվում է բուն Հայաստանը: Մի քանի տողի մեջ եվսեբիոսը երկու անգամ շեշտում է, որ նրանք բարեկամ և դաշնակից էին Հռոմին... Բարեկամ ու դաշնակից կարող է կոչվել համակիր, բայց անկախ երկիրը: Իսկ Հռոմի կայսրության մեջ ընդգրկված երկրները կայսրության մասն էին և ոչ նրա բարեկամն ու դաշնակիցը... Եթե Կեսարացին ասում է, որ Մաքսիմիանոս կայսրը արշավում է հայերի դեմ, որոնք բարեկամ ու դաշնակից էին, ապա խոսքը վերաբերում է անկախ երկրի՝ Մեծ Հայքին կամ բուն Հայաստանին»:

Շարունակելով իր միտքը, Ա. Մարտիրոսյանը փորձում է մեկնաբանել նաև եվսեբիոս Կեսարացու «Արդ նա (Մաքսիմիանոս կայսրը - Հ. Բ.) հանդերձ զօրօք իւրովք ի պատերազմ անդ ընդդէմ Հայոց ի բազում ուրեք հարեալ վատթարէր առաջի նոցա» նախադասությունը: «Կեսարացին ասում է, — գրում է Ա. Մարտիրոսյանը, — որ Մաքսիմիանոսը պատերազմ հարուցեց և պատերազմում էլ ջախջախվեց («վատթարէր առաջի նոցա»): Սեփական երկրի դեմ, շարունակում է հողվածադիրը, — պատերազմ չեն հարուցում, Մաքսիմիանոսը կարող էր ընդամենը պատժիչ արշավանք ձեռնարկել, և դժվար է ենթադրել, որ հռոմեական լեգեոնները կայսեր առաջնորդությանը ջախջախվեին ընդամենը մի համայնքի դեմ պատերազմելիս, որ գտնվում էր Հռոմի տիրապետության տակ»<sup>35</sup>:

31 А. А н н и н с к и й. Древние армянские источники. Одесса, 1899, с. 68—69.

32 J. G. D u c h e s n e. L'Armenie chretienne dans l'histoire Ecclesiastique d'Eusebe. Melanges Nicole. Geneve et Bale. 1905, p. 103—109, հայ. թարգմ. — «Հանդես ամսօրյա», 1910, էջ 268—271:

33 Հ. Մ ա ն մ ա յ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Հ. Բ. Երևան, 1957, էջ 127:

34 Գ. Ս ա ռ ց ս յ ա ն. Ճեռագրական հասարակարգի հաստատումը Հայաստանում. — ՊԲՀ, 1972, № 2, էջ 223:

35 Ա. Մ ա ռ տ ի ռ ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 16:

Ասվածի առնչությամբ շարադրենք մեր նկատառումները: Նախ «Հանդերձ սոքիմք յարեաւ և պատերազմ ի բռնաւորէն ընդդէմ Հայոց» նախադասությունը: Հունարեն բնադրում՝ «Τούτοις προσεπαύισταται τῷ τυράνῳ ὁ πρὸς Ἀρμενίουσ πόλεμος»: Հայերենը միանգամայն ճիշտ է թարգմանված: Բայց «ΠΟΛΕΜΟΣ»-ը (պատերազմ) բառացի չպիտի վերցնել, խոսքը «պայքարին» է վերաբերում, իմաստն այն է, որ կայսրը պայքար (հալածանք) ձեռնարկեց ընդդեմ քրիստոնյա հայոց: Հունարեն «ΠΟΛΕΜΑΩ» չի նշանակում միայն «պատերազմել», այլև «պայքարել» (ներգործական): Ըստ Սոզոմենոսի Կոստանդինոս կայսրը Ալեքսանդրիայի կղերի դեմ «Χαλεπῶσ ἐπολέμησεν» («դժան պատերազմ մղեց»): Եվ բայի կրավորականը. Կոստանդին Մեծ կայսրը որոշեց Պարսկաստանի քրիստոնյաների դեմ «ΠΟΛΕΜΕΪΣΘΑΙ» «պատերազմի բռնվել»: Նիկիայի ժողովում ընդունված դավանանքը, ըստ նույն Սոզոմենոսի, հետագայում «πολεμηθεΐσα», (նրա դեմ «պատերազմ մղվեց»)՝<sup>36</sup>, այսինքն որոշման դեմ հակադրվեցին, այն վիճարկեցին:

Եվսերիոս Կեսարացու խնդրո առարկա նախադասությունից չի կարելի եզրակացնել, որ կայսրը զենքը ձեռքին, իր լեգեոնների գլուխն անցած, արշավեց Հայաստան, ըստ Ա. Մարտիրոսյանի՝ Մեծ Հայք: Զարմանալին այն է, որ ըստ հողվածագրի, Հռոմեական հուժկու կայսրության վեհապետը «Չախջախվում է» Տրդատ III-ի կողմից: Եթե այդպիսի բան իրոք տեղի ունեցած լիներ, քրիստոնյա հայ թագավորը, քրիստոնեությունը պետական կրոն հռչակողը Չախջախեր համաշխարհային կայսրության հեթանոսական պաշտ կայսրին, ապա այդ դեպքը հայ միջնադարյան պատմագրության կողմից լռության կմասնվե՞ր: «Վատթարէր» չի նշանակում «Չախջախվեց»: Հունարեն բնագիրն ունի. «Αὐτὸς μὲν οὖν περὶ τὸν πρὸς Ἀρμενίουσ πόλεμον ἅμα τοῖσ αὐτοῦ στρατοπέδοισ κατεπονείτω», այսինքն կայսրը իր զորքերով «մաքառում էր ընդդեմ հայոց»: «Վատթարէր առաջի նոցա»<sup>37</sup> դարձվածքը չպիտի անջատել «Հանդերձ սոքիմք» բառերից, որոնք հայոց վրա տարածված սովին ու մահ տարածմին են վերաբերում, որ «սովն ու մահ տարածմը կարծես քիչ էին, դրանց վրա բարդվեցին և կայսեր կողմից քրիստոնյա հայերի հալածանքները»: Արանց պիտի գումարել և Եվսերիոս Կեսարացու նույն պարբերության վերջին հատվածը. «Իսկ որ միանգամ ընդ իշխանութեամբ նորա (Մաքսիմիանոսի – Հ. Բ.) բնակեալ էին ի քաղաքս, սով և մահ սատակէր զնոսա»: Անկախ Հայաստանի՝ Արշակունյաց Մեծ Հայքի ո՞ր քաղաքներն էին գտնվում կայսեր իշխանության ներքո:

Երկրորդ: Եթե խոսքը վերաբերում է անկախ երկրի՝ Մեծ Հայքին կամ բուն Հայաստանին, ապա ինչպե՞ս բացատրել Մաքսիմիանոսի ձեռք առած

36 Sozomenus Kirchengeschichte herausgegeben von Joseph Bidez. Berlin, 1960, S. 69, 149, 243.

37 «Վատթարեմ» բայը (անցյալ անկատար, երրորդ դեմք՝ վատթարէր) կրավորական իմաստ չունի, այլ ներգործական – «վատթար կացուցանել, տկարացուցանել, նկուն առնել, ընդ վայր հարկանել» (Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, «վատթարեմ» բառը): Նկատեմ, որ հունարեն բնադրում «առաջի նոցա» բառերի համապատասխանը չկա: «Վատթարէր»-ը Պ. Անանյանը հասկանում է այնպես, ինչպես Ա. Մարտիրոսյանը (նշվ. աշխ., էջ 51-52):

միջոցները ստիպելու իրենից անկախ երկրի բնակչությանը կուռքերին ու դեմքերին զոհ մատուցել ("είδώλους θυειν και δαιμοσιν έπαναγκασαι πεπειραμένους"):

Անցնենք Եվսեբիոս Կեսարացու հիշատակությանն այն հայերի մասին, «որք ի սկզբանէ անտի բարեկամք և մարտակիրք էին Հռոմոց», և կայսրը իր գործի դրած բռնությունների պատճառով «փոխանակ բարեկամաց թշնամիս և փոխանակ նիզակակցաց պատերազմողս ընդգէմ իւր յարոյց զնոսա»: Հունարեն ընթացում. "άνδρας έξ άρχαίου φίλους τε και συμμαχους 'Ρωμαίων" "έχθρους άντι φίλων και πολεμίουσ άντι συμμαχων κατεστησατο": Հունարենում ընդգծված բառերը՝ φίλος και συμμαχος - «բարեկամ և դաշնակիր» terminus technicus են: Հին Հռոմում «բարեկամ և դաշնակիր» էին բնորոշվում կայսրության տարածքում ընդգրկված էթնիկ (բնիկ) բնակչությանը նահանգները: Եվսեբիոս Կեսարացին ամենևին էլ նկատի չունի Արշակունյաց Հայաստանը՝ այլ հռոմեական Armenia նահանգը՝ Փոքր Հայքը: Այստեղ էր տեղակայված հայերից կազմված լեգեոնը<sup>38</sup>: Եվստրատիոսյանց վկայաբանության մեջ հիշվում է քրիստոնյաներից բաղկացած և Փոքր Հայքի Նիկոպոլիս քաղաքում տեղակայված լեգեոնը («ի զօրականացն յայնմ գնդէ՝ որ ի քաղաքին էին» (էջ 456), իսկ 45 սրբոց վկայաբանության մեջ հիշվում է "ή λεγεών πασα ή 'Αρμενια" («համայն հայկական լեգեոնը»):

Ինչպես Նիկողայոս Ադոնցն է գրում, Միհրգատ Պոնտացու «անկումից հետո (63 թ. մ.թ.ա. (Փոքր Հայքը) անցավ հռոմայեցիներին: Մեկ անգամ ընկնելով Հռոմի համաշխարհային քաղաքականության ոլորտը, նա այլևս չկարողացավ ազատվել կամ գուրս գալ նրա ազդեցությունից և հնագանդությունը կրեց բախտի քմահաճույքները»: Բայց «հիմք չկա հայոց պատմությունից գուրս հանելու վաղուց ի վեր բնիկ հայ բնակչություն ունեցող մի ամբողջ շրջան»<sup>39</sup>: «Նրա մասին դոյություն ունեցող պատկերացումներն այնքան աղոտ են, որ շատերը չեն տարբերում Փոքր Հայքը Կապադոկիայից...»: Ն. Ադոնցի ասածը միանգամայն աչքի է զարնում սրբոց վկայաբանություններում, որոնցում այդ երկուսը միշտ միասին են հանգես՝ գալիս, կարծես մեկ նահանգ լինեն: Ինչպես կտեսնենք ստորև, սուրբ Վլասիոսի վկայաբանության մեջ խոսվում է «Կապադոկիայի Սերաստիա քաղաքի» քրիստոնյաների մասին ("οι έν τη πόλει Σεβαστία της Καππαδοκίας") (հայերեն թարգմանության մեջ՝ «բնակիչք կապադոկացուց և որք ի Սերաստիա քաղաքի»): Ավելի խառնաշփոթ է Եվստրատիոսյանց վկայաբանության Մաչտոցի անվան Մատենադարանի 1404 թ. արտագրված 1520 համարի ճառը ներառում դրվածը: Խոսելով Եվստրատիոսի մասին (այստեղ նա հիշվում է իր բնիկ անունով՝ Տեր Հուսիկ), ցույց է տրվում, որ նա «էր ի քաղաքէն Արաւրակայ յաշխարհէն Գամրաց ի դաւառէն Սերաստիոյ» (թերթ 193):

Անդրադառնալով Փոքր Հայքի և Կապադոկիայի բնակչության էթնիկական պատկանելության հարցին, Ն. Ադոնցը գրում է. «Ստույգ հայտնի

38 J.P. Migne. նշվ. աշխ., հ. 115, սյունակ 324:

39 Ն. Ադոնց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի. Երևան, 1987, էջ 81-82:

է, որ Կապաղովկիայից անջատվելուց հետո Փոքր Հայքի դիւսավոր քաղաքը դարձավ Մելիտենեն, իսկ երբ բաժանվեց I և II Հայքի, ապա նրա մեջ մտան ոչ միայն Սեբաստիա-Սըվազը, այլև Արարիսոն-Յարփուզը, Կոկիսոն-Գյոքսունը և նույնիսկ Կոմանա-Շահրը ու Արիարաթիա-Աղիզիեն: «Համենայն դեպս տերիտորիայի նշանակալից մասը, չնայած սահմանային բոլոր փոփոխութիւններին, մշտապես մնաց Փոքր Հայքի կազմի մեջ իբրև նրա անկապտելի սեփականութիւն: Այդ մասը կարելի է անվանել Փոքր Հայք՝ proprie dicta: Այդ միանգամայն որոշակի նշված է Պտղոմեոսի մոտ, այսինքն՝ այն ժամանակ, երբ Փոքր Հայքը դեռևս միացված էր Կապաղովկիային, և որ հիմք է տալիս ենթադրելու, թե այդ մասի բնակչութիւնը եթե ոչ ամբողջութեամբ, ապա գերազանցապես բաղկացած էր հայերից»<sup>40</sup>:

Ինչպես վկայաբանութիւն բովանդակութիւն շարադրման առիթով ստորև կտեսնենք, դրա, ամենայն հավանականութեամբ, հայ հեղինակը<sup>41</sup> Կապաղովկիան չի համարում «հունաց երկիր»: Երբ Փոքր Հայքի և Կապաղովկիայի բնիկ կառավարիչները հեռացվում են պաշտոնից, Դիոկլետիանոս կայսրը նրանց փոխարեն նշանակում է երկու անձանց՝ ΕΚ ΤΗΣ ΤΩΝ Έλληνων χωρας ὀρωμαίνους” (սյունակ 468) - «ծագումով հույների երկրից», վկայաբանութիւն հայերեն թարգմանութիւն մեջ՝ «որ եկեալ էին ի Հելլենացոց գաւառէն» (էջ 436): Ստացվում է, որ վկայաբանութիւն հեղինակը Կապաղովկիան հունական երկիր չի համարում: Չմոռանաք, որ ըստ Մովսես Խորենացու մոտ պահպանված հայկական ավանդութիւն, առասպելական հերոս Մշակը «հրաման տայ բնակչաց աշխարհին (իմա՝ Կապաղովկիայի - Հ. Բ.) ուսանել զխօսս և զլեզուս հայկական. վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանէին Յոյնք զկղիմայն զայն Պոստին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք: Եւ զդաստակերտն, զոր շինեալ յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ... անուանեն հինք աշխարհին Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել. մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ անուանեցաւ Կեսարիա»<sup>42</sup>:

Ն. Ագոնցը, հենվելով Անտոնինոս Օգոստոսի ուղեցույցի և Պետրոս Գաբրիելի վրա, որոշում է Փոքր Հայքի տարածքը: Այն «ընկած էր Սեբաստիայի, Նիկոպոլիսի, Սատաղի և Մելիտենեի սահմանային կետերի միջև...»<sup>43</sup> Փոքր Հայքի ծայրամասերում ընկած այդ բոլոր քաղաքները միմյանց հետ կապված էին շրջանաձև ճանապարհով, այնպես որ Փոքր Հայքը գտնվում էր ռազմական գլխավոր ճանապարհների հանգույցում: Սեբաստիայից ճանապարհը դնում էր Նիկոպոլիս, Նիկոպոլիսից՝ Սատաղ, այնուհետև՝ Զիմարա, Զիմարայից Մելիտենե և ապա՝ մինչև Սեբաստիա»: Անտոնինոսի ուղեցույցում Սատաղայից Մելիտենե գծի վրա երկրորդ կետը

40 Նույն տեղում, էջ 88-89: Գրիգոր Լուսավորչին 302 թ. Կեսարիայում ձեռնադրող եպիսկոպոս Ղևոնդիոսը արդյո՞ք հույն էր... և Լուսավորիչը դեպքից առաջ Ղևոնդիոսի հետ անձամբ ծանոթ չէ՞ր:

41 Հայերեն գրերի չգոյություն պայմաններում պիտի որ հունարեն գրեր:

42 Մ ո վ ս է ս Խ ո Ր Ե Ն ա ց Ի. Պատմութիւն Հայոց, էջ 46-47: Հմմտ. Ա գ ա թ ա ն գ Ե Ղ ո ս, էջ 415: («... ի կողմանս կապուտկացոց, ի քաղաքն կեսարացոց, զոր ըստ հայերէն լեզուին Մաժաք կոչեն»):

43 Ն. Ա գ ո ն ց. նշվ. աշխ., էջ 90:

Arauracos է նշված<sup>44</sup>: Հենց այս քաղաքներն էլ կազմում են Եվստրատիոսյանց վկայաբանության աշխարհագրական միջավայրը:

Ն. Ադոնցը իր գրքի Փոքր Հայքին նվիրված դիստամ ամենևին չի օդատագործել վարք-վկայաբանությունները, որոնք ոչ միայն փայլուն կերպով հաստատում են իր կոազումներն ու գատողությունները, այլև բնձեռում նոր կարևոր փաստեր հարցը ավելի խորն ու հանգամանալից հետազոտելու համար: Նինա Գարսոյանը, որ իրականացրել է Ն. Ադոնցի աշխատության անգլերեն թարգմանությունը և այդ թարգմանությանը կցել 263 էջից բաղկացած կարևոր հավելված (թեմային վերաբերող աղբյուրներ), նման և ոչ մի աղբյուր չի նշել<sup>45</sup>:

Սրբոց Եվստրատիոսյանց վկայաբանությամբ միանգամայն հստակ կերպով հաստատվում է Եվսեբիոս Կեսարացու նշած Հայերի Փոքր Հայքի բնակիչներ լինելու հանգամանքը: Այդ մասին գեռ մանրամասն խոսք կլինի, բայց նշենք այստեղ, որ դեռ Մ. Ավգերյանը սրբոց Եվստրատիոսյանց իր հրատարակած վկայաբանության համառոտ նախաբանում գրել էր. «Հնդեբին սոքա (այն է՝ Եվստրատիոսը, Եվգենիոսը, Օրեստեսը, Ավքսենտիոսը և Մարդարիոսը - Հ. Բ.) փառաւորեալ վկայք՝ պարծանք Հայաստանեայց, էին ի սահմանաց աշխարհին Մեծ և Փոքր կոչեցեալ Հայոց: Պարագլուխ սոցա սուրբն Եւստրատիոս... էր հայրենեօք յԱրաբրակ քաղաքէ, մօտ յԵկեղեցաց գաւառ... զինուորեալ ի դունգն կայսերական՝ որ յԱրևելս, յաւուրս Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի, և հասեալ յաշտիճան իշխանական արութեամբ քաջութեան, որ և իւրով օրինակաւ ձգեաց զնահատակակիցս իւր ի հանդէս վկայութեան վասն անուան մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ ունի պատմութիւն սքանչելի կատարման նոցա՝ միաձայնութեամբ ճառնտրաց հայոց, յունաց և հռովմայեցոց»<sup>46</sup>:

### 3. Սրբոց Եվստրատիոսյանց վկայաբանության բովանդակությունը

Սրբոց Եվստրատիոսյանց վկայաբանությունը բավականին ընդարձակ է: Կաշխատենք նշել ամենակարևոր գրվագները, անհրաժեշտության դեպքում տալով բացատրություններ:

Ե՛րբ են տեղի ունենում գեպքերը: Ըստ վկայաբանության հայերեն թարգմանության, որն ինչպես ասվեց ներկայացնում է նախասկզբնական օրինակը, դրանք տեղի են ունենում Դիոկղետիանոս կայսեր օրոք: Վկայաբանության հայերեն թարգմանության մեջ, որպես կանոն հիշվում է մեկ կայսր՝ Դիոկղետիանոսը, Սիմեոն Մետափրաստեսի հունարեն բնագրում միաժամանակ իշխած երկուսը՝ «Βασιλευοντος Διοκλητιανου και Μαξιμιανου» («ի թագաւորելն Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի»): Հայերեն թարգմանության մեջ Ագրիկոլայոս գատավորը կոչ է անում Եվստրատիոսին «հատակ լեր հրամանաց ինքնակալին», իսկ Սիմեոն Մետափ-

44 Նույն տեղում:

45 N i c o l a s A d o n t z. Armenia in the Period of Justinian. The Political Conditions Based on the *Naxarar* System. Translated with Partial Revisions, A Bibliographical Note and Appendices by Nina G. Garsoian, Louvain, 1970.

46 Լիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց..., հ. Թ, էջ 481-482:

րաստեսի բնագրում՝ «ὑΠΟΚΥΠΤΕ ΤΟΙΣ ΘΕΟΠΙΣΜΑΣΙ ΤΩΝ ΚΡΑΤΟΥΤΩΝ» («Հպատակ լեր հրամանաց ինքնակալացն»)՝ Եվստրատիոսը ըստ հայերեն թարգմանությունից պատասխանում է. «Հակառակիմ ընդ անաստուած հրաման ինքնակալի ձերոյ»: Մետափրաստեսի տեքստում. ἀντιτάσσομαι τῷ προστάγματι τῶν βασιλέων» («Հակառակիմ ընդ հրամանն թագաւորացն»):

Շարունակություն մեջ հայերեն թարգմանությունը ցույց է տալիս, որ «գրաւորական հրամանք ինքնակալացն օրըստօրէ առաքեալ լինէին առ այնոսիկ՝ որ ըստ գաւառաց գաւառաց իշխանք և կուսակալք էին կարգեալք և հրամայէին նոցա զգուշական տեսչութեամբ առ տօնս և ամսամուտս աստուածոցն զոհ և նուէրս մատուցանել երևելի պատուով»<sup>47</sup>:

Օրինակները կարելի է բազմապատկել, բայց բացատրությունը մեկն է. քրիստոնյաների դեմ հալածանքների մասին օրենքների հեղինակը Օգոստոս Դիոկլետիանոսն է: Հարցը հետևյալն է. դահին բարձրանալուց անմիջապես հետո Դիոկլետիանոսը իրեն կառավարչակից էր ընտրել իր հայրենակից Մաքսիմիանոսին: Դիոկլետիանոսը և Մաքսիմիանոսը կրում էին Օգոստոս տիտղոսը: 293 թ. երկու կայսրերը իրենց համար ընտրեցին կառավարչակիցներ: Կայսրություն արևելյան մասում, որը կառավարում էր ինքը՝ Դիոկլետիանոսը, իր համար կառավարչակից ընտրեց Դայիոս Գալերիոս Վալերիոս Մաքսիմիանոսին, իսկ Արևմուտքի Մաքսիմիանոսը կառավարչակից նշանակեց Գայիոս Փլավիոս Վալերիոս Կոստանդին Քլորոսին: Հիշյալ կառավարչակիցները կրում էին «Կեսար» տիտղոսը, և թեև օժտված էին կայսերական ողջ իշխանությունով, «Կեսարները» «Օգոստոսները» համեմատությունով ավելի ցածր աստիճանում էին գտնվում: Օգոստոսները համարվում էին «եղբայրներ», Կեսարները՝ նրանց «որդիները»<sup>48</sup>: Ուստի միանգամայն պարզ է, որ վկայարանության Մաքսիմիանոսը Դիոկլետիանոսի կառավարչակիցն էր՝ Գայիոս Գալերիոս Վալերիոս Մաքսիմիանոսը, և ոչ Դիոկլետիանոսի «եղբայր» Մաքսիմիանոսը: «Որդի» Մաքսիմիանոսին վստահված էր ողջ Արևելքի, ասել է Փոքր Ասիայի կառավարումը. ինքնըստինքյան հասկանալի է և Դիոկլետիանոսի քրիստոնյաների դեմ ընդունած որոշման կյանքի կոչուլը:

Քրիստոնյաների հալածանքների ժամանակի մասին ավելի կոնկրետ են Գուրիայի, Սամոնայի և Աբիբի վկայաբանության տվյալները: Ըստ այդ աղբյուրի, հալածանքներն սկսեցին «Ալեքսանդր Մակեդոնացու թագավորության սկզբից հաշված վեցհարյուր տարի անց (խոսքը Սելևկյան կոչված տոմարին է վերաբերում, 600-րդ տարին հավասար է մ.թ. 289 թ.), և հռոմեական գայիսոնին տիրացած Դիոկլետիանոսի իններորդ (293 թ.) տարին»<sup>49</sup>:

Այստեղ կարևոր է նշել, որ միևնույն դեպքերը արձանագրված են նաև Երկրորդ Կապադոկիայից սերող սուրբ Հիերոնի վկայարանության մեջ,

47 Եթե հայերեն թարգմանությունը լիովին համապատասխանում է հունարեն բնագրին, բերվում է հայերեն թարգմանությունը: Եթե հանդես են գալիս առանձին տարբերություններ, նշվում է համապատասխան հունարենը:

48 Н. А. М а ш к и н. История Древнего Рима. М., 1950, с. 591 — 592.

49 Μαρτυριον των άγιων του Χριστου μαρτυρων και ομολογητων Γούρια, Σαμωνα και Αβιβου. J.P. M i g n e. նշվ. աշխ., հ. 116, սյունակ 128:



որ նույնպես Միմեն Մետափրաստեսն է շարադրել: Այստեղ ևս ասված է, որ Դիոկլետիանոսին և Մաքսիմիանոսին «Հայտնվեց, որ ամենայն աշխարհն Հայոց և Կապադովկացվոց» քրիստոնեություն են դաժանում և հակադրվում են իշխողների հրամաններին»<sup>50</sup> ("ἀγγελθεν αυτοις ὡς πᾶσα ἡ τε τῶν Ἀρμενίων χώρα καὶ ἡ Καππαδοκων, παρὰ φαυλον αὐτῶν τὸ δόγμα ποιούσι καὶ τοῖς προστάγμασιν ἀναπιπτουσιν"):

Ըստ Եվստրատիոսյանց վկայաբանության, Հայաստանի և Կապադովկիայի իշխանությունից հեռացված բնիկ կառավարիչներին «ի Հելլենացւոց գաւառէն» փոխարինելու եկած Լյուսիասն<sup>51</sup> ու Ագրիկոլայոսը էին «յոյժ իմաստունք և վարժք և կիրթք ամենայն հետտորական և փրիխոսփայական հանճարով, և խոհեմք խորագիտութեամբ քան զամենայն սինկղիտոսացն» (էջ 436): Ըստ հույթյան այս դրական բնութագիրը Միմեն Մետափրաստեսի մոտ բերված է այսպես. "έν ἐπιστήμη πολλῇ τῆς πατρῶας παιδεύσεως ὑπάρχοντας" - («նրանք քաջագիտակ էին հայրենական գիտությունաց»):

Ըստ սուրբ Հիերոնի վկայաբանության, Լյուսիասին և Ագրիկոլայոսին ուղարկում են որպես կառավարիչ «յուրաքանչյուր ազգություն վրա» - ("εἰς ἑκάτερον πέμπουσιν ἔθνος", սյունակ 110), մեկին հրամայեցին դեկավարել Հայոց երկիրը, դա Ագրիկոլայոսն էր, իսկ մյուսին՝ Կապադովկացվոց երկիրը կառավարելու: Նրա անունը Լյուսիաս էր ("ὦν τὸν μὲν ἕνα τῆς τῶν Ἀρμενίων χώρας ἡγείσθαι παρεκελεύσαντο, Ἀγρικόλαος οὗτος ἦν, τὸν ἕτερον δὲ τῆς Καππαδοκων ἐπιτροπεύειν, Λυσίας αὐτῷ τὸ ὄνομα", սյունակ 110): Ակնհայտ է սրբոց Եվստրատիոսյանց վկայաբանության տվյալների տարրերությունը: Այնտեղ, ինչպես տեսանք վերևում, Ագրիկոլայոսը հաստատվել էր Սեբաստիայում, Լյուսիասը՝ Սատաղում: Կապադովկիայի կառավարչի մասին հատուկ խոսք չկար:

Սուրբ Վլասիոսի վկայաբանության համաձայն, «Կապադովկիայի Սեբաստիա քաղաքի քրիստոնյաները Վլասիոսին ձեռնադրեցին եպիսկոպոս»: Ագրիկոլայոսի հալածանքներից խուսափելով, նա գնաց և ընակվեց Արգեսոս լեռան մի քարայրում: Բայց երբ նա մուտք գործեց Սեբաստիա, Ագրիկոլայոս հեգեմոնը նրան բանտ նետեց<sup>52</sup>:

Ըստ սուրբ Սևերինոսի վկայաբանության, դուքս Լյուսիասը Լիկինիոս կայսեր օրոք (308-324 թթ.) Կեսարիայից (ասել է՝ Կապադովկիայից) շտապում է Սեբաստիա գալ՝ Սեբաստիայի քառասուն վկաների հարցով<sup>53</sup>: Մի այլ սրբի՝ Ջենոբիոսի վկայաբանության համաձայն, Լյուսիասը, Դիոկլետիանոսի իշխանության սկզբում, մինչև Կապադովկիայի ղեկավարության անցնելը Կիլիկիայի էպարքոս էր նշանակված, և նա հաստատվել էր Մոպ-

50 Μαρτύριον τοῦ ἁγίου μεγαλομάρτυρος Ἰερώνος καὶ τῶν σὺν αὐτῷ ἁγίων τῶν ἐν Μελιτηνῇ ἀθλησάντων, J.P. M i g n e. էջվ. աշխ., հ. 116, սյունակ 110:

51 Ըստ Մայսոցի անվան Մատենադարանի 1404 թվին արտագրված №1520 ձառնարի (թերթ 193) «նստաւ յաանի Լիւսիաս դատաւորն յԱտալիայ քաղաքէն»:

52 "Αθλοισ τοῦ ἁγίου καὶ ἐνδόξου ἱερομάρτυρος Βλασίου ἐπισκόπου γενομένου Σεβαστίας, J.P. M i g n e. էջվ. աշխ., հ. 116, սյունակ 817, 821:

53 Μαρτύριον του ἁγίου μεγαλομάρτυρος Σεβηριανού, J.P. M i g n e. էջվ. աշխ., հ. 115, սյունակ 640:

սուբստիայում (Մսիսում)<sup>54</sup>: Հասկանալի է, որ Կիլիկիայում, Կապադովկիայում և Հայաստանում նրանց հիմնական պարտականությունը պետք է լինե՞ր կայսեր՝ քրիստոնյաների դեմ ընդունած վճիռը կյանքի կոչելը:

Ըստ Եվստրատիոսյանց վկայաբանության, «Լիւսիաս դուքսն զընակութիւն իւր ի Սատաղացւոց քաղաքին առնելով և զորս գտանէր ի գաւառին յայնմիկ սուրբս արս կամ կանայս, յետ բազում հարցափորձութեանց և դառն տանջանաց՝ արձակէր զգուշական կապանօք առ Ագրիկողայոս դատաւորն ի մայրաքաղաքն Սերաստացւոց, զվախճան սրոյ ընկալեալ ի նմանէ: և ոչ տայր թոյլ բնակել ի հայրենական գաւառսն իւրեանց, զի մի հանդիպեսցին դարմանի ուբեմն յընտանեաց կամ յազգականաց. նա զի ոչ ևս մարմինք նոցա օրինաւոր թաղման հասանելով պատշաճաբար գիցին ի գերեզմանի: Այսպէս և անօրէն Ագրիկողայոս արձակէր զըմբռնեալս ի Սեբաստիոյ ի Սատաղացւոց քաղաքն առ դուքսն Լիւսիաս, զպատուհաս մահու կրել ի նմանէ» (էջ 437): Մտադրութիւնը, ինչպէս պարզ ցույց է տրված վկայաբանության մեջ, ձերբակալված քրիստոնյաների ազգականների և համաքաղաքացիների հնարավոր ելույթներից խուսափելն էր:

Այս բոլորից հետո սրբոց Եվստրատիոսյանց վկայագիրը անցնում է վկայաբանության հիմնական նյութին. պատմվում է հինգ վկաներից գլխավորի՝ Եվստրատիոսի մասին և նշվում նրա պաշտոնն ու աստիճանը: Հունա-հռոմեական տերմինների հարցում ստիպված ենք դիմելու Սիմեոն Մետափրաստեսի հունարեն բնագրին, քանի որ հայ թարգմանիչը կամ չիմանալով դրանց իրական նշանակությունը, կամ ըստ սրբոց թարգմանչաց որգեգրած սկզբունքի, փորձում է թարգմանել, կամ ավելի ճիշտ՝ իմաստավորել, շատ հաճախ ոչ ճիշտ: Այսպէս ուրեմն, Եվստրատիոսը դքսական դասի սկիւնիարիոսն էր ("σκιυλιάριος της δουκικῆς τάξεως") և տվյալ տարում այդ «դասի» ղեկավարն էր ("πρωτεύων ἐν αὐτῇ - սյունակ 469): Նա ջերմ հավատացյալ քրիստոնյա էր և պատրաստ էր նահատակվել հանուն Քրիստոսի: Ցանկանալով համոզվել իր նահատակությունը բնորոշելի՞ է Տիրոջ համար, թե՞ ոչ, դիմում է հետևյալ քայլին. «Առ ինքն կոչէր զմի ոմն ի ծառայից իւրոց, և ղիշխանական դօտին (Մետափրաստեսի տեքստում առանց «իշխանական» բառի), տայր ցնա, զի տարցէ յեկեղեցին քաղաքին յԱրաւրակացւոց, ուստի ինքն եկեալ էր» (էջ 437-438): Սա պարզ վկայում է, որ նախքան հալածանքները, քրիստոնեական եկեղեցիները ազատ գործում էին Փոքր Հայքում: Եվ շարքային քաղաքացիները ևս բավականին ազատ դավանում էին իրենց նոր կրոնը: Նշենք նաև, որ 302 թ. առաջ փառք, մեծ թափորով Կեսարիա օծվելու գնաց Գրիգոր Լուսավորիչը, և իշխանությունները նրան չխանգարեցին, վերադարձի ճանապարհին էլ կանգ առավ Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքում և այնտեղից բազում եկեղեցականներ իր հետ Մեծ Հայք բերեց: Ինչ վերաբերում է բանակին և սպայական կազմին, ապա այստեղ պետությունը խիստ էր, այդ իսկ պատճառով նրանց շարքերում քրիստոնյաները հիմնականում կրիպտոքրիստոնյաներ (քողարկված քրիստոնյաներ) էին:

54 Μαρτυριον του αγίου μαρτυρος Ζηνοβίου και Ζηνοβίας της ἀδελφῆς αὐτοῦ. I. P. M i g n e. Նշվ. աշխ., հ. 115, սյունակ 1312:

Ծառան Եվստրատիոսի գոտին պիտի թաքուն Արավրակա քաղաքի եկեղեցու սուրբ սեղանին դնեն և ուշադիր հետևեն, եթե երեց Ավքսենտիոսը գոտին վերցնեն, շտապեր իրեն տեղեկացնել: Ավքսենտիոսը գոտին վերցնում է, ծառան այդ մասին հայտնում է Եվստրատիոսին, որի առթիվ սուրբը չափազանց ուրախանում է: Գոտին իշխանական նշանակ էր, դրանից զրկվելը պաշտոնանկություն էր նշանակում<sup>55</sup> և, Եվստրատիոսի համոզմամբ, նշանակ էր իր ցանկալի նահատակության հանուն Քրիստոսի: Այդ առթիվ նա Պրեստորիոնի իր բոլոր ընկերներին հրավիրում է խնջույքի, որում «մի ոմն ի բազմելոցն ընդ նմա, որ էր հասակակից նորա (Մետափրաստեսի բնազրում՝ «νεώτερος τῆν ἡλικίαν ὑπάρχων» - «նա (Եվստրատիոսից) տարիքով ավելի երիտասարդ էր», սյունակ 472) և սիրելի բարեկամ և քաղաքակից (Մետափրաստեսի բնազրում՝ «ἐκ τῆς Ἀραυρακτηῶν καὶ αὐτὸς ὑπάρχων πολίχνης» (սյունակ 477. - «նա ևս Արավրակացվոց քաղաքից էր»), որում անուն էր Եւգինէոս», հայտնում է, որ ինքը ևս քրիստոնյա է:

Դուքս Լյուսիասը մինչ այդ մահապատժի էր ենթարկել Արավրակա քաղաքի երեց Ավքսենտիոսին: Պարզելով, որ Եվստրատիոսը ևս քրիստոնյա է, «հրաման ետ զինուորացն մերկացուցանել զԵւստրատիոս, և ասէ. Արդ նախ կողոպտեսցի առաջի իմ յիշխանական պատմուճանացը որ շուրջ զգոփաւ, ի քղամիդէն և յոսկեհուռ հանդերձիցն և ի պատուական գօտուոյն, և այսպիսի օրինակաւ յայտնի լինիցի ամենեցուն օտարացեալ ի պատուոյ զինուորութեան» (էջ 441): Մետափրաստեսը Եվստրատիոսի վերոհիշյալ իշխանական նշանակներից հիշատակում է միայն չլափն-ն և չանդ-ն՝ պատմուճանն ու գոտին:

Սկսվում է Եվստրատիոսի հարցաքննությունը: Լյուսիասի հարցին Եվստրատիոսը պատասխանում է. «ՅԱրաւրակացւոց քաղաքէն<sup>56</sup> եմ ես ազգաւ և տոհմիւ, և անուն իմ Եւստրատիոս կոչի. ծառայ եմ ես արարչին իմոյ, արարողին գերկինս և գերկիր և խոստովանող Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի և ամենասուրբ Հոգւոյն. ի տղայական տիրոց և ի մայրական խանձարրոց զպաշտօնս զայս ուսեալ եմ և երկրպագեալ» (էջ 441-442): Սիմեոն Մետափրաստեսի ընազրում. «Ἐκ τῆς Ἀραυρακτηῶν ὠρμημαὶ πολίχνης, Εὐστράτιος τοῦνομα, Κυριστικῆς τῆν ἐπωνυμίαν, τῆ πατρῶα διαλέκτω, δούλος δὲ ὑπάρχω τοῦ Δεσπότη τοῦ ὅλων Θεοῦ, καὶ τοῦ προσκυνητοῦ Ἰησοῦ Χριστοῦ καὶ τοῦ ἁγίου Πνεύματος, ἐκ σπαργάνων μητρικῶν τοῦτο τὸ σέβας διδαχθεὶς προσκυνῶ» (սյունակ 473): Այս հատվածում հայերեն թարգմանություն մեջ ընդգծված բառերը Մետափրաստեսի տեքստում բացակայում են, իսկ հունարենում ընդգծվածը չկա հայերեն թարգմանության մեջ, այն է. «անուն իմ Եւստրատիոս

55 Անգամ բյուզանդական երազահաններում երազում գոտուց զրկվելը պաշտոնանկություն էր կանխագուշակում (Փաիճաճ Կուկուլես. Βυζαντινῶν βίος καὶ πολιτισμὸς, τόμος Α, 1, Ἀθήναι 1947, σελ. 15):

56 Արավրակա քաղաքը գտնվում է Փոքր Հայքում, Նիկոպոլիս-Սատաղ ճանապարհի վրա, որին ն. Ագոնցը բազմիցս է անգրագարձել իր աշխատության Փոքր Հայքին նվիրված գլխում (էջ 90-95): Այստեղ էր հաստատված հռոմեական սահմանապահ զորք լիմիտանետները: Ա՝ Երեմյանը տեղադրում է Մեծ Հայքում և գտնում, որ այն վերջինիս կազմում էր մինչև Հայաստանի առաջին բաժանումը՝ 387 թ.:

կոչի» բառերից հետո հունարենում գրված է. «մականվանյալ ըստ Հայրենի բարբառի՝ Կիրիսիկէս»: «Հայրենի բարբառը» հայերեն լեզուն է: Հայր հազիվ թե այս նախադասութիւնը ինքնաբերաբար կրճատած լիներ, Մետափրաստեսն այն ավելացրել է, հավանաբար, նման բանի հանդիպելով սուրբ Մարգարիտոսին վերաբերող շարադրանքում: Եվ պարտավոր էր դա անել, քանզի Լյուսիաս դքսի հարցը Մարգարիտոսին այդ էր պահանջում. «Նախ պատմեա ինձ... զբախտ և զանուն և զհայրենիս քո, և զգաւառն յորում ծնեալ ես» (էջ 441): Մետափրաստեսի բնագրում. «λέγει ... σὺν τῷ πατρῷ ὀνόματι καὶ τὴν ἐνεγκαμένην» (սյունակ 473 - «քո բնիկ (հայրենի) անվան հետ<sup>57</sup> ասա նաև ո՞րն է ծննդավայրդ»: Մարգարիտոսը Եվստորատիոսին դիմել էր «Δεσπόσυνε Κυρισίκη» ձևով՝ «Տէր Կիրիսիկէս» (սյունակ 481)»:

Լյուսիասը պահանջում է տաճար-ից իմանալ քանի տարի է Եվստորատիոսը ծառայում հիշյալ զորամասում (στρατεία): Պատասխանում են, թե երիտասարդ հասակից, որ քսանյոթ տարի է, ինչ լրացրել է Էկսեպտորի (ἑκοσέπτωρ) պաշտոնը: Լյուսիասի ասելով նա այդ պաշտոնը վարել է εὐτάκτως «բարեխղճորեն»: Երբ նրան չի հաջողվում ստիպել Եվստորատիոսին ուրանալ հավատքն առ Քրիստոս, սուրբը ենթարկվում է սարսափելի կտտանքների, բայց տեղի չի տալիս: Հենց այստեղ մեջտեղ է դալիս վերոհիշյալ Եվգենիոսը, «ոմն ի զօրականացն... որ էր ի նմին քաղաքէ յԱրաւրակացւոց ուստի երանելին Եւստուատիոս, և իշխանական պատուով ի նորուն դասուցն գորով», և աղաղակում է. «Լիւսիաս, Լիւսիաս, և ես քրիստոնեայ եմ»: Հայերեն թարգմանութեան մեջ Եվգենիոսը պարզապէս ծառայում էր այն «դասում», ինչ Եվստորատիոսը: Մետափրաստեսի բնագրում նա «ὀφικιαλίου τῆς αὐτῆς τάξεως» էր (սյունակ 477), այսինքն նույն «դասում» «օֆիկիալիոս»: Վերջին բառը հայերեն չի թարգմանվել: Ձերբակալվում է նաև Եվգենիոսը և Եվստորատիոսի հետ բանտ նետվում:

Հաջորդ օրը գուքս Լյուսիասը բանտից շղթայակապ դուրս է հանում Եվստորատիոսին և Եվգենիոսին ու ճանապարհ ընկնում դեպի Սեբաստիա: Ըստ հաստատված կարգի, որի մասին ասվել է վերևում, Լյուսիասի կողմից ձերբակալվածները դատվելու էին տարվում Սեբաստիա՝ Ագրիկոլայոսին, իսկ վերջինիս կողմից ձերբակալվածները Սատաղ՝ Լյուսիասին:

Լյուսիասը «հանգերձ ըագմութեամբ զօրացն դայր հասանէր յետ երկուց աւուրց և բանակէր մերձ առ դղեկին (Մետափրաստեսի բնագրում՝ κάστρον - բերդ) որ է հուպ ի քաղաքն Արաւրակացւոց: Եւ ի հասանել

57 Ստացվում, որ Փոքր Հայքի և Կասպադովկիայի հայերը երկու անուն ունեին, մեկը հունական կամ հռոմեական աշխարհի և իշխանութիւնների համար, մյուսը՝ իրենց հարազատ շրջանում հայկական: Լյուսիասի հարցը գալովագույնս հաստատում է:

Ագաթանգեղոսի մոտ կա դարձվածքի համապատասխան հայերենը՝ «Հայրաբարբառ» (գլուխ ՃԻԳ) նախադասութիւնն է. «(սբ. Գրիգոր) եկեալ հասեալ երևեալ Հայրաբարբառ Հայերէնախօս գտավ» հայոց երկիրը: Հունարեն Ագաթանգեղոսը համապատասխան տեղում ունի. «(Γρηγόριος) εἰς μέσον παρελθων, τὸ ζωοποιον κτηρυγμα τοῦ εὐαγγελίου τοῦ Χριστοῦ ἐπειράθη τῇ τῶν Ἀρμενίων γλωττῇ» («Գրիգորը) հանգես եկավ և Քրիստոսի կենարար Ավետարանը փորձեց Հայոց լեզվով քարոզել») - Agathangelus und die Akten Gregors von Armenien, neu herausgegeben von Paul de Lagarde, Gottingen, 1887, S. 80.

սրբոց անդր՝ ամենայն բնակիչք քաղաքին անորիկ ելանէին տեսանել (հունարեն բնագրում՝ *ἐπιποθοῦντες* ἰδεῖν - «բաղձալով տեսնել») զերանելիսն. բայց ոչ ոք յազգականաց կամ ի բարեկամաց սիրելեաց նորա (Եվստրատիոսի-Հ. Բ.) իշխէր մերձենալ առ նա վասն երկիրդի իշխանին, զի մի և նոքա ըմբռնեացին»: Սա հստակ ապացույցն է, որ Արավրակա քաղաքի բնակչությունը հիմնականում քրիստոնյաներ էին:

Վկայաբանություն հեղինակը արդեն անցնում է սուրբ Հնգյակի չորրորդ անձին («նամիկ» մեկին (Ἰδωτης), որ անվանված է Մարգարիոս (Μαρδαριος): Սա Հնգյակի միակ անձնավորությունն է, որի «անունը» հունական է: Բայց արդյո՞ք Մարգարիոսը անուն է: Համոզված ենք, որ դա ցեղանուն է, առնչվում է «մարդ» ցեղին: Մարդերը դեռ շատ վաղուց հաստատվել էին Հայաստանում, նրանց բնակության դավառները կոչվեցին Մարդաստան և Մարդաղի: Նրանք Պլինիոսի օրոք արդեն հայացած էին: Վերջինս հիշում է *armenomardi* ցեղը<sup>58</sup>: Արդ, եթե «անվան» - *arios* վերջածանցը փոխարինենք նույնիմաստ - *aitis*-ով, կստանանք *Μαρδαίτης* - մարգարիտ: Նրանցից կազմված բյուզանդական նշանավոր հայկական գնդերը հիշվում են VII դարի կեսերից<sup>59</sup>: Ի դեմս Մարգարիոսի մենք ունենք մարգարիտների հնագույն հիշատակությունը<sup>60</sup>:

Մարգարիոսը, երբ իր տան տանիքն էր նորոգում, սրբերի մեջ նկատելով սուրբ Եվստրատիոսին, ասում է կնոջը «ի բարբառ հայերէն» (հունարեն բնագրում՝ *τῆ Ἀρμενίων διαλέκτω* - «հայոց բարբառով»): «Ո՛վ կին, տեսանե՞ս գտէրն մեր Եւստրատիոս անուանեալն Կիւրիսիկոս (հունարենում *Κυριστικός*), զիշխան ամենայն շրջաբնակութեանս մերոյ, զի ի բաց լքեալ արհամարհեաց զգերապատիւ և զայնպիսի մեծութիւն և զփառոս աշխարհիս, և զամենայն երևելի փարթամութիւն ընչից և ազգի և ստացուածոց, և զքաջամարտիկ զինուորութիւնն զոր ոչ ոք ունէր նման նմա ի մէջերկրայքս ամենայն. և ընդ այլ կալանաւորսն երթայ ի տեգի հանդիսի ի յասպարէզ կատարման և վկայական նահատակութեան, զի զկնի ցանկալի կենցազավարութեան իւրոյ զհաւիտենական թագաւորութեանցն ժառանգեսցէ զառհաւատաչեայ բարութիւնսն» (էջ 449):

Ինչպէս վերևում արդեն նշեցինք, գեո հնուց բացատրել էին, թե Կիրիսիկէս հունարեն *Κύρι* (կիր - տէր) և *հուսիկ* անունն է, և որ Եվստրատիոսի բնիկ անունը *Տեր Հուսիկ* է: Այսպես, հայկական ճառընտիրներում (հմմտ. 1404 թ. արտագրված Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1520 գրչագրում). «Ասէ Մարգարիոս ցկինն իւր. տեսանե՞ս զի ահա տէքն մեր Յուսիկ երթայր ի մարտիրոսութիւն» (թերթ 194): Նույն ձեռագրում Եվստրատիոսի մասին ասված է նաև, թե նա «էր ի քաղաքէն Արաւրակայ

58 Plinii Naturalis Histroia. VI, 10. Հմմտ. Ն. Ա. Գ. Ն. Գ. Նշվ. աշխ. էջ 464:

59 Մանրամասն տե՛ս P. M. Б а р т и к я н. Разрешение проблемы мардаитов. — «Լրաբեր հաս. գիտ.», 1983, №2, էջ 66-82: Նշենք այստեղ, որ Պտղոմեոսը (V 6, 18) Փոքր Հայքում նշում է *Μάρδαρα* անունով քաղաք. Ն. Ա. Գ. Ն. Գ. Նշվ. աշխ. էջ 89, ծանոթ. 2:

60 Հարկավ միամիտ է «անվան» Մ. Ավգերյանի ստուգաբանությունը. «Մարգարիոս ոմն, որ և Մարգարյր ասի», որ իբր հայերեն և հունարեն բնագրերում գրված է «Մարգարյր», որը «և այս երևի բնիկ հնչումն հայերէն, որ յոյնք հելլենացուցանելով գրեցին Մարտարիոս (որ և լինի Մարտայր. իբր այր մարտի կամ արի). և ի մեզ անգրէն փոխանցեալ եղե Մարգարիոս» (Լիակատար վարք և վկայաբանությունք սրբոց..., հ. 10, էջ 534:

յաշխարհէն Գամրաց ի դաւառէն Աեբաստիոյ: Եւ էր պատուով ի դքսական կարգէն ի Հարկաւորացն: Եւ էր բնական (ասել է՝ բնիկ - Հ. Բ.) անուն նորա ասէր Յուսիկ» (Թերթ 193):

Կնոջ խորհրդով Մարդարիոսը միանում է Եվստրատիոսին՝ իրեն զոհաբերելու հանուն Քրիստոսի, նախապես շտապելով «ուժեմն մեծատան, որ էր այր երևելի, և էր երկիւղած ի Տեառնէ, ի նմին գեղջ (հունարեն բնագրում՝ ἐν τῇ Ἀραυρακηνῶν τὴν οἰκησιν ἔχοντα, καὶ πρωτεύοντα ἐν αὐτῇ, ἀνδρα ἐπισημον καὶ πλοῦσιον πάνυ - «Արավրակացվոց (քաղաքում) բնակվող՝ նրա գլխավորը (առաջինը) նշանավոր և արտակարգ հարուստ մարդու»), որում անուն էր Մուսատարիոս (հունարենում Μουκάτωρ - Մուկատոր), և ասէ ցնա երանելին Մարդարիոս. Ահաւասիկ գնամ ես առ սիրելին քո և ազգակիցն Եւստոատիոս, զի ընդ նմա զջան նահատակութեան յանձն առեալ վկայեցից վասն ճշմարտութեանն, կամելով Աստուծոյն մերոյ» (էջ 450): Մարդարիոսը խնդրում է Մուկատորին հոգալու իր ընտանիքի և զավակների մասին, ինչը Մուկատորը խոստանում է, ասելով. «Երթ ի խաղաղութիւն... և զընթացս քո կատարեա ըստ հաճոյից Տեառն Աստուծոյ մերոյ»: Եթե Մուկատորը «երկիւղած էր ի Տեառնէ» և պաշտում է նույն աստծուն, ինչ քրիստոնյա Մարդարիոսը, ուրեմն Արավրակայի քաղաքապետը ևս քրիստոնյա էր:

Մարդարիոսը միանալով Եվստրատիոսի խմբին՝ «ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Քրիստոնեայ եմ իբրև զպատուական տէրս իմ Եւստոատիոս, լուարուք զայս ամենայն պաշտօնեայք սատանայի» (էջ 451):

Մարդարիոսը նախքան դատաքննութեան ենթարկվելը, դիմելով Եվստրատիոսին, հարց էր տվել. «Տէր իմ Եւստոատիէ՞<sup>61</sup>, աղաչեմ քեզ... ուստ՝ ինձ թէ զինչ տաց պատասխանի յատենի անդ ապականիչ և չար գազանին այնոսիկ (նկատի ունի դուքս Լյուսիասին - Հ. Բ.): Պատասխանի ետ սուրբն Եւստոատիոս և ասէ ցնա. եղբայր իմ Մարդարիէ, բնաւ ամենեկին զոր ինչ հարցանէ գքեզ, այլ ինչ մի՛ տացես նմա պատասխանի. բայց միայն ասա թէ քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ, և մի՛ փոխեսցիս ի բանից յայսցանէ» (էջ 452-453): Հռոմեական իրավունքի մասնագետները կպարզեն, թե նման վարվելակերպը ինչ էր տալիս ընդդատյա անձնավորութեանը: Միմեռն Մետափրաստեսի բնադրում այդ բառերից հետո ցույց է տրված Մարդարիոսի սոցիալական դրութունը. «Ինչ պատասխանեմ այդ կործանիչին, թերևս այդ վայրենի գայլը ինձ որպես գյուղացու (χωρικον) և «անգրագետի (ἀγράμματον) ծանակի» (սյունակ 484): Իսկ 1404 թ. ճառընտիրում նա համարվում է «այր մի ի շինականաց» (Թերթ 194):

Լյուսիասի հրամանով նախ գլխատում են երեց Ավքսենտիոսին: Մահապատիժը կատարվում է Արավրակա քաղաքին «մերձ ի ձորակ անդր, զոր մեք Լեռնոտն անուանեմք» (էջ 459): Հունարեն բնագրում տեղանունը Ὀρῶρεια է (սյունակ 488): Հայերենում թարգմանված է տեղանունը, չի բացառվում, որ տեղի է ունեցել հակառակը՝ հայերեն տեղանունն է հունարեն թարգմանվել: Այնուհետև մահապատժի են ենթարկում Եվգենիոսին:

<sup>61</sup> Եվստոատիէ (Մարդարիէ) հունարեն կոչական հոլովն է՝ «Ո՛վ Եվստրատիոս», «Ո՛վ Մարդարիոս»:

Լյուսիաս դուքսը դաշտում կազմակերպում է զորավարժություններ, ապա «իջանէր ամենայն րանակաւն ի դաշտ անդր, ի Հանդիսի անցուցանել և Համար առնել զօրացն արքունի» (էջ 454): Յայնժամ երևեալ ոմն ի մէջ բազմութեան զօրացն գեղեցիկ և հռչակելի տեսեամբ զարդարեալ, որում անուն էր Ովրեստէս. այր քաջ և վայելուչ պանծալի Հասակաւ, լցեալ ամենայն խոհեմական իմաստութեամբ և Հանճարով, զօրաւոր բանիւք և արդեամբք, և կիրթ առ մարտիցն յառաջադիմութիւն» (էջ 454-455): Երբ «ի Հանդերձիցն երևեցաւ խաչ մի ոսկի որ կայր թաքուցեալ ի գրապանակ պատմուճանի նորա», պարզ դարձավ, որ Ովրեստէսն էլ քրիստոնյա է: Նա ասաց Լյուսիաս դքսին. «Մառայ եմ ես խաչելոյն Յիսուսի Քրիստոսի... և զնշանդ զայգ կրեմ ի պահպանութիւն անձին իմոյ» (էջ 455): Նրան ևս, կապանքների մեջ առնված, միացնում են Եվստրատիոսի խմբին և շարժվում դեպի Նիկոպոլիս: «Եւ ի Հասանել դքսին ի քաղաքն Նիկոպոլսացւոց մեծապայծառ Հանդիսիւ, բաղումք ի զօրականացն յայնմ գնդէ՝ որ ի քաղաքին էին (խոսքը Նիկոպոլսում տեղակայված «Հայոց լեզեոնի» է վերաբերում - Հ.Բ.) մատեան առ իշխանն Լիւսիաս մեծաւ Համարձակութեամբ, ազազակեցին միով բերանով և ասեն. Ով Լիւսիաս, և մեք քրիստոնեայք եմք, և զինուորեմք երկնաւոր թագաւորին Յիսուսի Քրիստոսի... Զայս և առաւել քան զսոյն միաբան բազմութիւն զօրականացն՝ որք ի քաղաքի անդր կային՝ աղաղակէին առաջի իշխանին» (էջ 455-456)<sup>62</sup>:

Լյուսիասը տեղի ունեցածից սարսափեց՝ «զարհուրեցաւ դուքսն... երկեաւ ի բաղմութենէ քաղաքացեացն, զի մի յանդուքն յարձակմանէն չարինչ Հանգիպեցի նմա»: Նա վախեցավ նաև, որ Հանկարծ կարող է տեղի ունենալ «շփոթումն ինչ ի քաղաքացեաց կամ յազգականաց մանաւանդ յԵստոռատիոսէ: Դարձեալ ասէ. Գուցէ տանջանս Հասուցանելով նմա, նոյնպէս հրաչ սքանչելեաց երևեսցին, որպէս և յառաջնումն նուագին. և ոչ միայն որ քրիստոնեայքն են Հաստատեսցին ի Հաւատսն, այլ և զձեւլեանացիս (իմա՝ Հեթանոսներին - Հ. Բ.) ապսամբեցուցանէ ի յերկրպաղութենէ աստուածոցն մերոց» (էջ 456): Բայց Հանդստացավ, երբ պարզեց, որ նրանք «որպէս խաչինս երկնաւոր հովուին կամաւ ի մահ մտտնեցին զամէնս իւրեանց» (էջ 456):

Լյուսիասը Եվստրատիոսին և Ովրեստէսին Համապատասխան բացատրագրով ուղարկում է Սեբաստիա Ագրիկոլայոսի կողմից դատվելու: Բացատրագրում Եվստրատիոսը բնութագրվում է որպէս «ոչ անտեղագոյն իմաստասիրական վարժեարաց արհեստից, և ստաղիացն ի մարտակցութիւն յոյժ է կրթեալ, և ծայրադոյն զինուորութեան գահաւորութեան ժամանեալ... և յետ բազում քննութեանց և Հարցմանց անյոյս եղեալ ի դորին վրկութենէ, առաքեցի կապանօք առաջի քո տէրութեանդ զի դու զարժան վրիժուցն անարգութեան գիցն խնդրել մարթայցես քո արդար դատասանօքն» (էջ 458): Սույն պարբերությունում ընդգծվածը Մետափրաստեսը չունի:

Նիկոպոլսից հինգ օր ճանապարհ կտրելով, սրբերը Հասնում են Սեբաստիա: Ագրիկոլայոս Հեգեմոն-դատավորի կողմից կայանում են Եվստրա-

62 Պահպանվել է Նիկոպոլսում տեղակայված «Հայոց լեզեոնի» քրիստոնյա գինավորների վկայաբանությունը: Տես ստորև:

տիրոսի դատաքննությունն ու դատավարությունը, որոնց մասին տե՛ս առանձին ստորև:

Մահապատժի է ենթարկվում Ովրեստեսը, որին ներկա էր և Եվստրատիոսը: «Անթիւ բաղմուժիւն շուրջ զնոքօք, այլ և արք քաղաքին Սերաստիոյ Հանդերձ կանամբք և որդևովք ժողովեալ էին ի տեսիլ սրբոցն, և դիւզէին կուտէին մի զմիով որ ոչ գոյր թիւ» (էջ 467):

Եվստրատիոսին վերադարձնում են բանտ: Այնտեղ նա ծառայից խնդրում է գրելու թուղթ ըրերել իր կտակը կազմելու համար: Բայց նախքան կտակը, սուրբը, ըստ վկայարանության, դրում է «զամենայն հանդէս նեղութեանցն՝ որ հասին ի վերայ նորա», այսինքն մի շարադրանք, որ հետագայում վկայադիրը օգտագործելու էր վկայաբանությունը շարադրելիս: Կտակում Եվստրատիոսը կարգադրեց, որ իր և մնացած սրբերի նշխարները տարվեն «ի հայրենի բնակութիւն իւրեանց յԱրաւրակացւոց քաղաքն և դնել յայցելում տեղւոջ որ կոչի Բոսոսա (հավանաբար՝ Անալի)բոսոսա, հունարեն բնագրում՝ Ἀναλιβοζορα (Անալիբոզորա)<sup>63</sup> հանդերձ և այլովքն՝ որ ընդ նմա կատարեցան, Ովրեստիւ, Մարդարիոսիւ, Աւքսենտիոսիւ, Եւզինէոսիւ» (էջ 468): Կտակում նա մանրամասն ցույց տվեց ինչպես բաժանել իր ունեցվածքը: Արավրակայի իր կալվածքը նախատեսեց տալ իր և մնացյալ սրբերի աճյունների վրա կառուցվելիք վկայարանի սպասարկուներին: Ինչ վերաբերում է շարժական գույքին, այս հանձնարարեց դրա կեսը բաժանել աղքատներին, իսկ մնացյալ կեսը տալ իր քույրերին: Կարգադրեց նաև ազատ արձակել իր ստրուկներին՝ տալով նրանց ևս ժառանգություն (սյունակ 501):

Սերաստացվոց եպիսկոպոս «Վլասիոս կամ Պետրոս... զնշխարս սրբոց վկայիցն... բարձեալ տանէր ի հայրենի գաւառն իւրեանց՝ ի քաղաքն Արաւրակացւոց... ի տեղւոջն, զոր սրբոյ վկային նշանակեալ էր ի կտակի անդ իւրում: Իսկ յետ գաղարման հալածանացն՝ շինեաց վկայարանս ի վերայ հանգստարանի սրբոցն հնգեցուցն անյաղթ վկայիցն Քրիստոսի, Աւքսենտիոսի, Մարդարիոսի, Եւզինէոսի, Ովրեստի և մեծին Եւստռատիոսի» (էջ 533)<sup>64</sup>:

Սուրբ Եվստրատիոսին դաժանագույն մահապատժի են ենթարկում: Նրա մահվան առթիվ, ըստ վկայագրի, «ամենայն ամբոխն որ շուրջ կային... զկական բարձեալ ողբերգական ձայնիւ լային, և ամենայն Հելլենացւոց (հեթանոսաց -Հ. Բ.) բաղմութիւնք հանդերձ քաղաքացեօքն, և մորմոքէին ի վերայ այնպիսւոյ առն իմաստնոյ» (էջ 471-472):

#### 4. Սրբոց Եվստրատիոսյանց պատմությունն առնչվող այլ վկայաբանություններ

63 VII դարի Աշխարհացույցի Աղիւնը և Պտղոմեոսի Analibna, Analiba կամ Analibla-ն, ընդ որում Աղիւնը նահանգ է, իսկ Անալիբոսան քաղաք: Պտղոմեոսը դրանք տեղադրում է Փոքր Հայքում: Ն. Ա. Դ. Ո. Ն. Գ. Նշվ. աշխ., էջ 68: Ἀναλιβοζορα տեղանվան վերջին չորս տառերում ζορα չի կարելի չնկատել հայերեն «ձոր» բառը:

64 Սրբոց վկայից աճյունների վրա կառուցված այլ վկայարանների մասին տեղեկությունների հանդիպում ենք և այլ վկայաբանություններում:



Այս աշխատությունը հիմնված է սրբոց եվսարատիոսյանց վկայաբանությունների վրա, քանի որ թեմայի համար, այլ վկայաբանությունների համեմատությունում, ընձեռում է ամենաարժեքավոր ու հանգամանալից փաստերը: Աշխարհագրական նույն տարածքի վրա և եվսարատիոսյանց վկաների ժամանակ ապրած ու դործած և իրենց քրիստոնեական հավատքի համար տանջամահ արված այլ սրբերի վկայաբանությունները լրացնում են մեր հիմնական աղբյուրը և առանձին դեպքերում ոչ պակաս կարևոր են: Հետաքրքրականն այն է, որ վերջիններիս դեպքում էլ հալածանքները դիտարկվող հռոմայեցի բարձրաստիճան դործիչները նույն Ագրիկոլայոսն ու Լյուսիասն են:

Սուրբ եվսարատիոսյանց վկայաբանությանը համահունչ է սուրբ Հիերոնի վկայաբանությունը, ուր խոսվում է Դիոկլետիանոսի և Մաքսիմիանոսի քրիստոնյաների նկատմամբ ձեռնարկած հալածանքների մասին: Հիերոնի հայրենիքը Երկրորդ Կապադովկիայի Տիանա քաղաքն էր: Կայսրերին հայտնվում է, որ «համայն հայոց երկիրը և կապադովկացոցը (*πασα ἡ τε των Ἀρμενίων χώρα καὶ ἡ Καππαδοκων*), ի հեճուկս նրանց, քրիստոնեություն են գալանում և կայսրերի հրամաններին չեն ենթարկվում: Կայսրերը երկար խորհրդակցելուց հետո ընտրում են երկու խորամիտ, խորամանկ և հմուտ անձնավորությունների, ուղարկում են մեկին կառավարելու հայոց երկիրը (իմա Փոքր Հայքը – Հ. Բ.), նա Ագրիկոլայոսն էր, իսկ մյուսին՝ կապադովկացոցը կառավարելու (*ἐπιτροπεύειν*). նրա անունը Լյուսիաս էր»<sup>65</sup>:

Սուրբ Հիերոնին գլխատում են Փոքր Հայքի մայրաքաղաք Մելիտենե քաղաքում, նրա հետ նաև երեսուն մելիտենացի քրիստոնյաների:

Ըստ սուրբ Զենոբիոսի վկայաբանության, Դիոկլետիանոս կայսեր իշխանության սկզբում Լյուսիասը նշանակվել էր Կիլիկիայի էպարքոս (*Τῆς Κιλικίων ἑπαρχὸν προχειρίζεται*): Նա հաստատվեց Մոպսուեստիայում (*Մսիսում*) և քրիստոնյաների դեմ գաժան հալածանքներ կաղմակերպեց<sup>66</sup>: Հավանաբար, իր «հաջող» գործունեության համար Լյուսիասին այնուհետև Կիլիկիայից ուղարկում են Կապադովկիա և Փոքր Հայք իր գործունեությունը Ագրիկոլայոսի հետ շարունակելու:

Դուքս Լյուսիասը գործեց նաև Լիկինիոս կայսեր օրոք (վերջինս իշխում էր Կոստանդին Մեծի հետ միասին 307-324 թթ.): Այդ մասին մանրամասն խոսվում է Սեբաստիայի Քառասուն մարտիրոսաց վկայաբանության մեջ: Վերջինիս համաձայն նրանք «էին զինուորք... ի Գամրաց գաւառին (Կապադովկիա - Հ. Բ.) ի գնդի (իմա՝ լեգեոնի - Հ. Բ.) միում»: Ագրիկոլայոսը, որն այստեղ նույնպես ներկայացված է որպես գատավոր, սպա-

65 Μαρτύριον τοῦ ἁγίου μεγαλομάρτυρος Ἰερωνοῦ καὶ των συν αὐτῷ ἁγίων των ἐν Μελιτηνῇ ἀθλησάντων. J.P. M i g n e. Նշվ. աշխ., հ. 116, սյունակ 110, 113: Սրբոց եվսարատիոսյանց վկայաբանության մեջ Լյուսիասը Սատաղում էր հաստատված և գլխավորում էր սահմանապահ զորքը: Այնտեղ Կապադովկիայի նոր կառավարչի մասին խոսք չկար: Ըստ Հիերոնի վկայաբանության, դուքս Լյուսիասը Կապադովկիայի կառավարիչ է նշանակված:

66 Μαρτύριον του ἁγίου μάρτυρος Ζηνοβίου καὶ Ζηνοβίας τῆς ἀδελφῆς αὐτοῦ. J.P. M i g n e. Նշվ. աշխ., հ. 115, սյունակ 1312: Ինչպես տեսանք, ըստ 1404 թ. ճառընտիրի, Լյուսիասը գործել էր նաև Ատալիայում:

սոււմ էր «գալստեան դքսին», այսինքն՝ Լյուսիասին: Վերջինս «եկն ի Կեսարիա և մտեալ ի Սեբաստիա՝ նստաւ յատենի Հանդերձ դասպաւորաւն»:

Քառասուն քրիստոնյա զինվորները 320 թ. ջրահեղձ են արվում Սեբաստիայի լճում<sup>67</sup>:

Քառասունհինգ սրբոց վկայարանության համաձայն, դարձյալ Լիկիւնիոս կայսեր օրոք, դուքս Լյուսիասին էր ենթարկվում «ամբողջ հայկական լեզեոնը» (ὡπερ ἦν ἀποκεκληρωμένη ἡ λεγεὼν πασα ἡ Ἀρμενία)<sup>68</sup>: Այդ օրերում «ի գունդն սենոտորաց» (սենատորական) ծառայում էր սուրբ Սևերինոսը, որ նշանակվել էր հենց դուքս Լյուսիասի կողմից: Սևերինոսին ամբաստանեցին, թե «արհամարհէ զհրամանս ինքնակալին», ինչպես և Լյուսիասի, կուռքերին զոհ չի մատուցում՝ «զինքենէ քրիստոնեայ դոլով»: Նրան նաև մեղադրանք ներկայացվեց, թե «մահու պատճառ եղև քառասուն սրբադոյն զինուորացն»<sup>69</sup>: Խոսքը Սեբաստիայի լճում ջրահեղձ արված զինվորներին է վերաբերում:

Վկայաբանությունում ասվում է, որ երբ սուրբ Սևերինոսին տանում էին բանտ, «երթայր ընդ նմա և ամենայն ամբոխ քաղաքին մինչև ցբանտն. զորս ողջունելով ի համբոյր սրբութեան զհաւատացեալսն ի Տէր, մտանէր ի ներքս ուրախութեամբ բազմաւ»: Լյուսիասը Սևերինոսին մահապատժի ենթարկելուց առաջ ասաց սրբին. «Սսէին ինձ վասն քո ամենեքեան, թէ ումիկ այր ես դու առանց դպրութեան. այլ ես առն հոետորի և փրկիսոփայի քաջաբանութիւն տեսանեմ ի քեզ»<sup>70</sup>:

Լիկիւնիոս կայսեր օրոք նահատակվեց և սուրբ Վլասիոսը, որին «բնակիչք կապաղովկացւոց և որք ի Սեբաստիա քաղաքի (Միմեոն Մետափրաստեսի տեքստում՝ οἱ ἐν τῇ πόλει Σεβαστεία τῆς Καππαδοκίας - «Կապաղովկիայի Սեբաստիա քաղաքի բնակիչները»<sup>71</sup>) կամեցան դալ նմա ի պատիւ եպիսկոպոսութեան... և ժողովեալ եպիսկոպոսաց բազմաց և քահանայից և կղերիկոսաց՝ վերակոչեն զնա յաթոռ քահանայապետութեան Սեբաստիոյ քաղաքի...»: Հետաքրքրականն այն է, որ Սեբաստիայի քահանայապետ ձեռնադրելուն մասնակցում են և կապաղովկացիք, որոնք, շատ հավանական է, Հայեր էին: Նրան ոչնչացնելու հանձնարարությամբ Լիկիւնիոս կայսրը Սեբաստիա է ուղարկում «այր ժսիրհ և ապարասան, որում

67 Վարք և վկայաբանութիւնք սրբոց: Հատընտիր քաղեալք ի ճառընտրաց. Հ. Բ. Վենետիկ, 1874, էջ 506-513:

Կապաղովկիայի - Փոքր Հայքի (Սեբաստիայի) հայոց (ամենայն հավանականությամբ՝ ֆեդերատներին) ուղ հոռոմեական, ապա և բյուզանդական բանակում ծառայելու փաստը արձանագրված է Կոստանդին Միրանաձին կայսեր «Բյուզանդական արքունիքի Արարողությունների մասին» գրքում: Լևոն VI կայսեր օրոք՝ 902 թ. Սեբաստիա բանակաթնմից 1000 հայ զինվորներ իրենց հրամանատարներով մասնակցեցին Կրետե կղզուն տիրացած արաբների դեմ կազմակերպված արշավանքին: Հայտնի են անգամ նրանց ոտձկաչափերը: Տես Օտար ազբյուրները Հայաստանի և Հայերի մասին 6: Բյուզանդական ազբյուրներ, գիրք Բ., Կոստանդին Միրանաձին: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1970, էջ 145-146:

68 J.P. M i g n e. նշվ. աշխ., հ. 115, սյունակ 324:

69 Վարք և վկայաբանութիւնք սրբոց: Հատընտիր քաղեալք ի ճառընտրաց. Հ. Բ. էջ 301:

70 Նույն տեղում, էջ 307.

71 "Αθλησις τοῦ ἁγίου καὶ ἐυδόξου ἱερομάρτυρος Βλασίου ἐπισκόπου γενομένης Σεβαστείας. J.P. M i g n e. նշվ. աշխ., հ. 116, սյունակ 817:

անուն էր Ագրիկոլայոս: Լուեալ այնուհետև հաւատացելոց զհամբաւ դալստեան նորա, զօղեալք թաքչէին»<sup>72</sup>:

Հիշյալ դեպքերը տեղի ունեցան Լիկինիոսի օրոք նախքան 313 թ., նախքան այդ կայսեր և Կոստանդին Մեծի հրապարակած այսպես կոչված Միլանի էդիկտը:

Փոքր Հայքի Նիկոպոլիս քաղաքում «ի մէջ լէգէոնին Հայոց» ծառայում էին քառասուններեք քրիստոնյա ղինվոր-ղինվորականներ, որոնք Լյուսիաս դքսի կողմից նահատակվեցին: Դքսի հարցին, թե «ուստի՞ էք դուք, և ո՞ ուսոյց ձեզ չպաշտել զդիսն վերինս, և չզոհել նոցա», նրանցից մեկը՝ Ղևոնդիոսը, բոլորի անունից պատասխանեց. «ոմանք ի մէջ քաղաքէ աստի (Նիկոպոլսից Հ.Բ.) եմք, և այլք ի մերձակայ սահմանաց քաղաքիս» (էջ 107), ասել է բոլորն էլ հայեր էին: Բանտում ծարավից տառապող մահապարտներին, որոնք «ի մանկութենէ» քրիստոնյաներ էին (էջ 116), թաքուն ջուր էր բերում Բասիանէ անունով մի քրիստոնյա կին, որը, վախենալով բանտի գուանը կանգնած ղինվորներից, չէր համարձակվում խոսել բանտարկյալների հետ: «Յայնժամ սուրբն Ղևոնդիոս խօսեցաւ առ Բասիանէ հայերէն լեզուաւ<sup>73</sup> առ չիմանալոյ բանտապանացն»:

Քրիստոնյա և «իշխան մի էր ի Նիկոպոլիս իբրև քաղաքապետ Հերովդէս անուն՝ քրիստոնեայ, այլ կեղծաւորեսզ զհեթանոսութիւն» (էջ 121): Ասել է բարձրաստիճան պաշտոնեութիւնը քողարկված քրիստոնյաներ էին: Այդ քառասուններեք մահապարտներին միանում են և նոր կրօնը դավանած երկու եգիպտացի պահակները, որով սրբերը դառնում են քառասունհինգ հոգի: Բոլորին մահապատժի ենթարկեցին, աճյունները նետեցին Գայլ գետը (էջ 127)՝ Նիկոպոլիս քաղաքից վեց մղոն հեռավորութեան վրա և «ոչ կարի հեռի ի Սեբաստիոյ» (էջ 131)<sup>74</sup>:

##### 5. Փոքր Հայքի և Կապադոկիայի քաղաքական կարգավիճակը նախքան քրիստոնյաների հալածանքները

Արդ, ինչպիսի եզրակացութիւններ կարելի է հանդել վերոգրյալի հիման վրա: Նախ և առաջ Փոքր Հայք և Կապադոկիա նահանգների քաղաքական կարգավիճակի հարցում: Մինչև Ագրիկոլայոսի և Լյուսիասի տեղ ժամանելը և հիշյալ նահանգները կառավարելը, այդ պաշտոնը վարում էին տեղացիք (յազգէ բնիկ), ասել է հայեր և կապադոկացիներ: Բացի այդ, վերոհիշյալ և ոչ մի վկայաբանութեան մեջ այդ նահանգների Հռոմին հարկատու լինելու մասին խոսք չկա: Եթե լիներ, ապա վկայաբանութեան հեղինակը ամենամուսուլ գուցեներով կնշեր այդ փաստը: Ասել է նահանգները վայելում էին «ազդային ինքնավարութիւն», պատկանում էին Հռոմեական կայսրութիւնում ընդունված *φίλος και σύμμαχος* - բարեկամ և

72 Վարք և վկայաբանութիւնք սրբոց: Հատրնտիր քաղեալք ի ճառընտրաց. Հ. Բ, էջ 382 և հտ.:

73 Գրիգոր Լուսավորչին ձեռնադրող կապադոկացի եպիսկոպոսը նույնպես Ղևոնդիոս էր կոչվում:

74 Վկայաբանութիւն սրբոց քառասուն և հինգ վկայիցն, որ ի Նիկոպոլիս Փոքրուն Հայոց: Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց..., Հ. Դ, Վենետիկ, 1813: Առանձին ձեռագրերի վերնագրում գրված է «Ինք մարտիրոսաց որ ի Նիկոպոլիս Հայոց» (նույն տեղում, էջ 132):

դաշնակից կատեգորիային: Դիոկլետիանոսը իր ձեռնարկած «բարենորոգումներով» նպատակ էր հետապնդում վերացնել այդ ինքնուրույնությունը: Առաջին քայլը եղավ բնիկ նահանգապետերին ազատելն ու նրանց փոխարեն սեփական կադրեր նշանակելը: Այդ քաղաքականությունը հետագայում վարվում էր հայկական և այլ կիսանկախ նահանգների նկատմամբ: Փոքր Հայքի և Կապադոկիայի դեպքում պայքարը գնաց քրիստոնեությունից դեմ մզվող պայքարի քողի տակ: Այս առթիվ միանգամայն տեղին է զուգահեռ անցկացնել Փոքր Հայքի և Բյուզանդական կայսրության սահմաններում գտնվող և ներքին ինքնավարություն վայելող Հայաստանի 387 թ. բաժանմամբ Բյուզանդիային անցած Մեծ Հայքի հարավարևմտյան շրջանների՝ սատրապություն-նախարարությունների, այն է՝ Անձիտի, Անգեղտան, Հաշտյանքի, Ծոփքի, Շահունյաց Ծոփքի, Բաղնատան նախարարությունների<sup>75</sup>, ինչպես և Ներքնագույն Հայքի (Αρμενία ή ένδοτατη – Armenia Interior) միջև: Սատրապ-նախարարների իշխանությունը ժառանգական էր և ցմահ: Նրանք հռոմայեցիների կայսրից ստանում էին միմիայն նշանակներ<sup>76</sup>: Ինչպես գրում է Ն. Ագոնցը, «վերոհիշյալ շրջանները իրավական տեսակետից կարելի է դասել կայսերական օրգանիզմի բաղկացուցիչ միավորներին, որոնք գեո հնում կոչվում էին գաշնակցային՝ foederatae և ազատ – liberae: Նրանք համարվում էին իրենց տարածքի լիակատար տերերը, հարկատու չէին, չունեին հռոմեական կառավարիչ և իրենց մոտ չէին պահում հռոմեական կայսրը: Նրանց կայսրությունից հետ կապող հիմնական պարտականությունն էր զինական ուժեր հատկացնելը և ընդհանրապես զինական օգնություն ցուցաբերելը... Լինում էին ένσπενδοι, συμμαχικοί (գաշնակից) ժողովուրդներ և ի հակադրություն սրանց՝ υπηκοοι, άρχομενοι (հպատակ)»<sup>77</sup>: Քանի որ այստեղ արդեն կրոնական հարց գոյություն չունեն (Բյուզանդիան վաղուց քրիստոնյա տերություն էր), ապա առիթ հանդիսացավ Իլլոսի և Լեոնտիոսի կողմից Ջենոն կայսեր դեմ 484 թ. բարձրացրած ապստամբությունը սատրապների մասնակցությամբ: Ջենոնը «մի թույլ և աննշան իշխանություն ունեցող սատրապի Բալաբիտենե (իմա՝ Բալահովիտ – Հ. Բ.) կոչված երկրում թողեց նախկինի պես իշխել միայն, իսկ մնացած բոլորին, զրկելով իշխանությունից, չուվեց այն նրանց ցեղակիցներին (ինչպես Դիոկլետիանոսը Փոքր Հայքի և Կապադոկիայի դեպքում – Հ. Բ.), այլ, ինչպես հռոմեական բոլոր մյուս իշխանություններում էր, դարձրեց ոչ ժառանգական՝ ըստ կայսեր ցանկություն... Հուստինիանոս կայսրը... վերջ տվեց սատրապների իշխանությունը և այդ ցեղերի (բնագրում՝ έθνη, ինչպես վկայաբանության մեջ Փոքր Հայքի և Կապադոկիայի բնակչությունն է կոչված – Հ. Բ.)

75 Հմմտ. «գմեծամեծ նախարարսն սատրապսն Հայոց». Փալստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 113:

76 Պրոկոպիոս Կեսարացիին նկարագրում է սատրապների նշանակները. «գա բրդյա քղամիդ էր... քղամիդի վրա ամրացված էր լինում ոսկե ճարմանդ մեջտեղում թանկագին քար... քղամիդից րացի կար նաև մետաքսյա պատմուճան» (տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 5, Բյուզանդական աղբյուրներ, գիրք Ա, Պրոկոպիոս Կեսարացի: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 190-191: Եվստրատիոսի նշանակներն էին քղամիդ, իշխանական պատմուճան և պատվական գոտի: XI դարի արճճ կնիքների վրա պատկերված սբ. Եվստրատիոսի քղամիդի վրայի ճարմանդը:

77 Ն. Ագոնց. նշվ. աշխ., էջ 122-123:

վրա նշանակեց երկու, այսպես կոչված դուքսեր»<sup>78</sup>: Հայկական գործը նա լուծարեց և դուքսերին տվեց «Հռոմեական մեծաքանակ զորք»<sup>79</sup>: Հետագայում քաղկեդոնիկ կայսրության նմանօրինակ պայքարը «ազդուլթյունների» (εθνη) դեմ ընթացավ միաբնակություն գեմ պայքարի քողի տակ:

Նույն պատկերն է ներկայացնում և բյուզանդական Ներքնագույն Հայքը – Ἀρμενία ἐνδοτατη – Armenia Interior, որ 387 թ. բաժանմամբ անցել էր կայսրության ձեռքը: Բյուզանդական բանակում ծառայող նշանավոր զորավարներ Հովհաննես Արչակունին ու նրա փեսա Վասակը, երբ պարզ դարձավ, որ Հռոմայեցիների հետ համաձայնության գալու հույսերը ի դերև անցան, գնացին պարսից արքա Խոսրովի մոտ և ասացին նրան. «Մեր նախնիների վերջին արքա Արչակը կամավոր կերպով իր իշխանությունից հրաժարվեց հօգուտ Հռոմայեցիների կայսր Թեոդոսի այն պայմանով, որ իր բոլոր տոհմակիցները (ասել է՝ հայերը – Հ. Բ.) հավիտյան պիտի անկախ ապրեն և ոչ մի դեպքում հարկատու չդառնան...: Մենք կարողացանք պաշտպանել սահմանվածը այնքան ժամանակ, մինչև որ դուք կնքեցիք այս չարաբաստիկ հաշտությունը»<sup>80</sup>: Խոսքը վերաբերում է Հուստինիանոս Ա-ի և պարսից արքա Խոսրովի 532 թ. կնքված «հաշտության» կոչված հաշտությանը: Շարունակելով, նրանք ասացին Խոսրովին: «Նա (իմա՝ Հուստինիանոսը – Հ. Բ.) չէ՛, որ մեր վրա սահմանեց հարկերի աննախընթաց գումար»:

#### 6. Քրիստոնեության ընդլայնումը Փոքր Հայքում և Կապադովկիայում

Փոքր Հայքում, Կապադովկիայում (և Կիլիկիայում), ասել է՝ Հռոմեական կայսրության այս «ազդային ինքնավարություններում», քրիստոնեությունը տարածված էր սոցիալական բոլոր խավերի շրջանում: Մարդարիոսը «ռամիկ» էր (ιδιωτης της τύχης), Ավքսենտիոսը՝ սովորական «եղեց», բայց եվստրատիոսը՝ «իշխան», անշարժ և շարժական հսկայական գույքի, ստրուկների տեր, Եվգենիոսը՝ «մին ի գորականացն», որ «իշխանական պատուով ի նորուն (եվստրատիոսի) գասուցն գոլով» (էջ 446-447), Ուրբեստեսը՝ «քաջ պինուոր» (էջ 454-455): Քրիստոնյա էր Արավրակայի քաղաքապետը (Մուկատոր) (πρωτεύων εν αυτη), «այր երևելի» և «մեծատուն» (άνδρα έπιστημον και πλουσιον πανυ - սյունակ 481 - «այր երևելի և անչափ հարուստ»): Քրիստոնեությունը լայնորեն տարածված էր բանակում: Փոքր Հայքի Նիկոպոլիս քաղաքում տեղակայված հայկական լեգեոնի «բազումք ի գորականացն յայնմ գնդէ՝ որ ի քաղաքին էին մատեան առ իշխանն Լիւսիաս մեծաւ համարձակութեամբ, աղաղակեցին միով բերանով և ասեն. Ո՛վ Լիւսիաս, և մեք քրիստոնեայք եմք»: Զինվորականներ էին

<sup>78</sup> Հռոմեական կառավարիչների թվաքանակն էլ է համընկնում: Դիոկլետիանոսը նշանակել էր Ազրիկոլայոսին և Լյուսիասին:

<sup>79</sup> Պրոկոպիոս Կեսարացի, էջ 191: Սատրապությունների մասին տես ն. Ադոնցի հիշյալ աշխատության մեջ և հատուկ Կ. Փյունտեբրոկ. Հռոմեական Հայաստան և Հռոմեական սատրապությունները Դձ դարերուն. Գերմաներեն թարգմանեց Հ. Մկրտիչ Վ. Նորշուան. Վիեննա, 1914:

<sup>80</sup> Հմմտ. և Մովսես Խորենացու Պատմության մեջ: Արչակ III թագավորի մահից հետո «ոչ ևս կացուցին Յոյնք ի բաժնի իւրեանց թագաւոր... և աշխարհին իւրեանց մասինն կացուցին Յոյնք կոմէսս իշխանս» (էջ 316):

Սեբաստիայի քառասուն վկաները, սենատորական զնդում ծառայող սուրբ Սևերինոսը: Քաղաքների բնակչությունը մեծ մասամբ քրիստոնյաներ էին, որոնցից սարսափում էր անգամ դուքս Լյուսիասը: Բարձրաստիճան քաղաքացիները նախընտրում էին նոր կրոնը թաքուն դավանել: Նիկոպոլսի քրիստոնյա քաղաքապետը ձևացնում էր, թե հեթանոս է («կեղծաւորեալ զհեթանոսութիւն»):

Քրիստոնեությունը հունա-հռոմեական շրջաններում սկզբում տարածված էր հրեական համայնքներում (հիշենք Պողոս առաքյալի հասցեատերերին), ապա մասնակից դարձան և բնիկները (Աթենքում մեկ հոգի՝ Դիոնիսիոս Արեոպագոսին), ապա շատ շատերը: Բայց շարժումն այստեղ տարածքային (ազգային) ծավալ չստացավ: Իսկ Փոքր Հայքում և Կապադովկիայում (հնարավոր է նաև Կիլիկիայում), այսինքն «ազգային ինքնավարություններում», այն «համազգային» ծավալ ստացավ: Եթե այս շրջանները չգտնվեին Հռոմի տիրապետության ներքո, հնարավոր է քրիստոնեությունն այստեղ պաշտոնական կրոն հռչակվեր 301 թ. էլ առաջ:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ քրիստոնեությունն այստեղ սոցիալական բնույթ չէր կրում, հասարակության վերին և ստորին խավերի միջև զնացող պայքար չէր, այլ քրիստոնեական գաղափարներով քողարկված ազգային ինքնության պահպանմանն ուղղված շարժում: Եվ ոչ միայն: Եթե նկատի ունենանք վկայաբանության մեջ նշված այն կարևոր փաստը, թե «ամենայն աշխարհն Հայաստանեաց և Կապադովկիա ընդդիմամարտեղեն թագաւորական հրամանին (իբրև թե աստվածներին զոհ մատուցելու մասին — Չ. Բ.) և միաբանութեամբ յապստամբութիւն իմն թեակոխեն», և դա «լուեալ Դիոկղիտիանոս խռովեցաւ ի սրտի իւրում», իսկ այն պատճառով, որ բնիկ կառավարիչները չեն էլ փորձում գրա առաջն առնել, գրա համար էլ պաշտոնանկ են արվում և նրանց փոխարեն օտարներ են նշանակվում, վկայությունն է այն մասին, որ այս երկու նահանգներում Հռոմի լուծը թողթափելուն ուղղված անջատողական (սեպարատիստական) տրամադրություններն շատ ուժեղ էին: Եվ պատահական չէ, որ քրիստոնյաների հալածանքները Հռոմեական կայսրության տարածքում առավել գաժան բնույթ ստացան հենց «ազգային ինքնավարություններում», այն նահանգներում, որոնք գտնվում էին Դիոկլետիանոսի և Գայիոս Գալերիոս Վալերիոս Մաքսիմիանոսի իրավասությունների ներքո:

#### 7. Քրիստոնեական կրոնի գաղափարաբանական հիմնավորումը Փոքր Հայքում և Կապադովկիայում

Մինչև այստեղ խոսքն ընթացավ նոր կրոնի Փոքր Հայքում (և Կապադովկիայում) տարածվելու քաղաքական շարժառիթների շուրջ: Սակայն սրբոց Եվստրատիոսյանց վկայաբանությունը հնարավորություն է ընձեռում նաև ցույց տալու, թե երկրամասի քրիստոնյա մտավորականությունը գաղափարաբանական ինչ միջոցներով էր հիմնավորում նոր կրոնի ճշմարիտ լինելը: Քրիստոնեական ապոլոգետիկան (Չատագովությունը) այս շրջանում ընթացավ նեոպլատոնական փիլիսոփայության ուղղությամբ:

Հին Հայաստանի փրկիսոփայության պատմության անվանի Հետադոտող ակադ. Սեն Արևշատյանը իր «Փրկիսոփայական գիտության ձևավորումը Հին Հայաստանում (V-VI դդ.)» աշխատության մեջ հատուկ նշում է. «Նեոպլատոնականությունը, որպես այն ժամանակ (խոսքը վերաբերում է V դարի 60-80-ական թվականներին – Հ. Բ.) առավել տարածված փրկիսոփայական ուղղություններից մեկը, սկսեց իր համար ճանապարհ հարթել նաև հայ իրականության մեջ: Եղիշեն առաջին հայ մտածողն էր, որի հայացքներում իրենց արտահայտությունը գտան նեոպլատոնական կոնցեպցիաները, թեկուզև ենթարկված քրիստոնեական-բարոյագիտության պրոբլեմատիկային: Եղիշեի հայացքների բնորոշման համար հենց այս վերջին պարագան դարձավ որոշիչ, չնայած նեոպլատոնականության ծիլարձակմանը որպես ամբողջությամբ քրիստոնեական ապոլոգետիկայի ուղղությանը վերաբերող»<sup>81</sup>:

Ս.Արևշատյանը միանգամայն արդարացի է, երբ, նկատի ունենալով հայոց գրերի գյուտից անմիջապես հետո ստեղծված մի շարք ինքնուրույն հայերեն ստեղծագործություններ<sup>82</sup>, ցույց է տալիս, որ «հայ գրականությունը և փրկիսոփայական մտքի այս առաջին հուշարձանների ուսումնասիրության ժամանակ, չպետք է անուշադրության մատնել այն հանգամանքը, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց շատ առաջ հայերը անգիր ժողովուրդ չէին: Այս շրջանում և ավելի ուշ, մինչև V դարի սկիզբը, նրանք օգտվում էին հունարեն, պարսկերեն, ասորերեն լեզուներից և գրերից՝ պետության կրոնի և հոգևոր մշակույթի կարիքների համար»<sup>83</sup>: Նրա այս միտքը՝ հունարեն լեզվի առնչությամբ, ահա փայլուն կերպով գալիս է հաստատելու (ամենայն հավանականությամբ հայի կողմից գրված) սրբոց Եվստրատիոսյանց վկայաբանությունը նախ և առաջ նեոպլատոնականության հարցում:

Սրբի գատաքննության ընթացքում տեղի ունեցած Եվստրատիոս-Ագրիկոլայոս բանավեճը մանրամասն արձանագրվել է: Այդ մասին հստակ ցուցմունքի ենք հանդիպում հենց սրբի վկայաբանության մեջ: Այնտեղ, ինչպես ցույց տրվեց վերջինիս բովանդակության շարադրանքում, Լյուսիաս գուճքը հաստատված կարգի համաձայն Սատաղ քաղաքում ձերբակալվածներին ուղարկում է Սեբաստիա Ագրիկոլայոս հեգեմոն-գատավորի կողմից գատաքննության ենթարկվելու: Ագրիկոլայոսը նույն կարգի համաձայն Սեբաստիայում ձերբակալվածներին Սատաղ էր ուղարկում՝ Լյուսիասի մոտ: Նպատակը որն է, ասված է վկայաբանության բովանդակության շարադրանքում: Այսպես ուրեմն, Լյուսիասը Եվստրատիոսին (և գինվորական Օրեստեսին) ուղարկում է Ագրիկոլայոսի մոտ: Նրանք նիկոպոլ-

81 С. С. А р е в ш а т я н. Формирование философской науки в Древней Армении (V–VI вв.). Ереван, 1973, с. 119–120.

82 Նույն տեղում, էջ 43:

83 Նույն տեղում, էջ 53: Տասնամյակներ անց Արշակ II-ի և Պապի օրոք ապստամբ Մերուժան Արծրունու կարգադրությամբ, թեև «այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք» (Նորենացի, էջ 329), և որ նա «հրաման տայր մի ուսանել զտպրութիւն յունարէն, այլ գպարսիկն. և մի ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել, այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենևին մի լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ, այլ ճշմարիտ խափանել զքրիստոնէութեան ուսումն, զի յայնժամ գիր դպրութեան Հայոց չև ևս էր լեալ, և յունականաւ վարէին եկեղեցւոյ կարգք» (Նորենացի, էջ 301), բայց նա իր նպատակին չհասավ:

սի վրայով հասնում են Սերաստիա և հանձնվում դատավորին: Մեղադրյալների հետ միասին ուղարկվում են Ազրիկոլոյոսին հասցեագրված Լյուսիասի նամակները (ΕΠΙΣΤΟΛΑΙ) և Եվստրատիոսի «քննության գրավոր արձանագրությունը» (ΕΥΓΡΑΦΟΣ ΕΞΕΤΑΣΙΣ – սյունակ 489): Դրանք Ազրիկոլայոսի հրամանով դատաքննության սկզբում ընթերցվում են: Նշենք, որ հայերեն թարգմանության մեջ ΕΠΙΣΤΟΛΑΙ-ն (նամակները) թարգմանված է «հրովարտակ»<sup>84</sup>, իսկ արձանագրությունը չի հիշված: Մունետիկը բարձրաձայն «աղաղակէր ի լուր ամենեցուն հրամանաւ դատաւորին և ասէր. Գրաւորական նամակքն որ առաքեցան ի Պարհացւոց»<sup>85</sup> դքսէն Լիւսիասայ, ընթերցցի ի լուր ատենիս. և յայտնի լիցի ի նմանէ մակադրեալ ամբաստանութիւնքն՝ որ ինչ վասն Եւստրատիոսի էին» (էջ 460):

Նշենք, որ վկայաբանության հայերեն թարգմանության 1874 թ. հրատարակության առաջաբանի անանուն հեղինակը միանգամայն ճիշտ ցույց է տվել, որ «Անդ ի խռան բազմութեան հանդիսատեսացն՝ դոյին և վկայադիրք նօտարք առ ի յեկեղեցւոյ կարգեալք, որոց գործ էր հաւատարիմ զգուշութեամբ տալ ի քարտի զոր լսէինն և տեսանէին, զբանս և հրապոյրս դատաւորաց, և զսրբոցն առ նոսա պատասխանիս, զազգս ազգս տանջանաց և զմահ վկայութեան, զորս յունկն հաւատացելոց ընթերցեալ՝ ամփոփէին ապա ի դիւանս եկեղեցւոյ: Այս սկիզբն եղև Մարտիրոզք (վկայաբանություն – շ. Բ.) կոչեցեալ գրոց կամ վկայաբանութեանց»:

Այս կամ այն սրբի վկայաբանության կազմող կարող էր իր մոտ նշել տեսածն ու լսածը, բայց նա չէր կարող ձեռքի տակ ունենալ հարցաքննության սզագրությունը: Դա ձեռք բերվեց մի երկու տասնամյակ անց, երբ քրիստոնեությունը դադարեց արգելյալ և հետապնդվող կրոն համարվելուց:

Սուրբ Եվստրատիոսի և նրան գառող Ազրիկոլայոս հեգեմոնի միջև ընթացած բանավեճը ցույց է տալիս, որ վկան շարքային մի անձնավորություն չէր: Նախ և առաջ նա քաջածանոթ էր հռոմեական օրենսգրությանը: Նա անգամ մեջբերումներ է կատարում Կեսարի դատաստանագրքից: «Ո՛վ դատաւոր,- դիմում է նա Ազրիկոլայոսին,- քանզի պարունակեալ լինի յօրէնս (νόμω) Սերաստիոսի կայսեր»<sup>86</sup> այսպէս. բռնութիւն, ասէ, ի բաց լիցի յամենայն իրէ, և ի գործոց և ի բանից. բայց հաւանութիւն յամենայնի քաջաքավարեալ լիցի. քանզի պարտ է այնմ որ ի իստանութեամբ լինիցի՝ զհրամայեալսն գործել, կամ հաւանեցուցանել կամ հաւանել: Եւ դարձեալ պարունակէ յետոյ փոքր ինչ նուագիս այսմիկ տանց, և ասէ այսպէս. Այլ ի իստանին, ասէ, հրամայեմք զերկիւղն ընդ հեզութիւն խառնել ի դատելն

84 «Հրովարտակ» (եզակի) է թարգմանված ΕΠΙΣΤΟΛΑΙ-ն (հոգնակի):

85 Անհասկանալի «Պարհացւոց»-ի փոխարեն հունարեն բնագրում «παρά τοῦ περιβλήπτου» է՝ «նշանավոր, փառավորյալ»: Մ. Ավգերյանը նկատել է թյուրիմացությունը և հենվելով Սուրիոսի լատիներեն թարգմանության վրա, գրել. «Ըստ Սուրիոսի՝ ի պայծառ»: Այսինքն ըստ էության Սուրիոսը Սիմեոն Մետափրաստեսի բառի թարգմանությունն է տվել:

86 Ճիշտը՝ Սեբաստոս Կեսարի (Σεβαστου Καίσαρος): Նույն սխալը՝ Կեսար տոհմանունը ընդունել որպես αυτοκράτωρ - imperator հանդիպում է նոր Կտակարանի հայերեն թարգմանության մեջ ամենուրեք: Հմմտ. Մատթ. 22.17, 22.21, Մարկոս 12.14, 12.16, 12.17. Դուկաս 2.1, 3.1, 20.22, 20.24, 20.25, 23.2, Հովհաննես 19.12, 19.15, Գործք Առաք. 11.28, 17.7, 25.8, 25.10, 25.11, 25.12, 25.21, 26.32, 27.24, 28.19, Փիլ. 4.22:



իւրում, որսլէսզի մի՛ ոմանց վասն երկիւղին առ թշնամութիւն առնել, և ոչ վասն հեղութեանն՝ հեղգութիւն առ ոմանս ի կիր արկանել: Ջայտոսիկ զոր ասացի իսկ, ո՛վ դատաւոր, գրեա՞լ է (ΥΕΥΡΑΠΤΑΙ) այսպէս եթէ ոչ: Ագրիկո-ղայոս ասաց. Այո՞» (էջ 461): Եվստրատիոսը Ագրիկոլայոսից պահանջում է, որ այդ սկզբունքը կիրառվի և իր դեպքում (սյունակ 489):

Եվստրատիոսը քաջատեղյակ էր նաև հին հունական գրականությանը, անտարակույս նաև քրիստոնեական կրոնի հիմնական գրքերին՝ Հին և Նոր Կտակարաններին: Նշենք այստեղ, որ Եվստրատիոսը տվյալ պահին արդեն ծառայել էր հռոմեական բանակում ամբողջ քսանյոթ տարի, ասել է, եթե նա ծառայութեան է ընդունվել քսան տարեկան հասակում, ապա տվյալ պահին նա շուրջ հիսուն տարեկան էր, այդ ժամանակների համար պատկառելի տարիքում: Բայց դա ամբողջը չէ: Երբ Ագրիկոլայոսը և նրա գործակից Լյուսիասը, վկայարանութեան հայերեն թարգմանութեան ասելով «եկեալ էին ի Հելլենացւոց գաւառէն, յոյժ իմաստունք և վարժք և կիրթք ամենայն հոռտորական և փիլիսոփայական հանճարով, և իոհեմք խորագիտութեամբ քան զամենայն սինկղիտոսացն» (էջ 436), բաղմաստվածությունը պաշտպանելու համար Ագրիկոլայոսը հիշում է Պլատոնին, Արիստոտելին, Հերմես (Եռամեծին) և Հին Հունաստանի այլ հեղինակութուններին, ապա Եվստրատիոսը պատասխանում է. «Ոչ եմ անտեղեակ միում ումեքս ի նոցանէ, այլ ամենեցուն հմտացեալ եմ ի մանկութենէ իմմէ (հունարենում ἐκ νεαρᾶς ἡλικίας - «երիտասարդ հասակից», սյունակ 492). ուսեալ եմ և դերաժշտական ամենայն, հմուտ եմ ասաեղաբաշխութեան արհեստիցն, և ոչ հեռի յերկրաչափական գծիցն և վարժումն թուականութեան օրէն իսկ է մեր՝ առաքինասէր Հօր հանդիպեալ եմ՝ մակացու գոյով նրա արհեստագիւտ մասանց և գիտութեանց. և եթէ կամեսցիս սկսցուք նախ ի Պլատոնէ»<sup>87</sup>:

Պատահական չէ, որ Եվստրատիոսը նախաձեռնում է միաստվածութեան պաշտպանութեան համար սկսել Պլատոնից, հավանաբար՝ նրա Տիմեոսի «տրամաբանությունից»: Սրան ի պատասխան Ագրիկոլայոսն ասում է. «Գրեմք զՊլատոն առ Տիմէի՞ մատենին տրամաբանութեան»: Ագրիկո-

87 Հմմտ. Մ ո վ ս է ս ի ն ո Ր ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, էջ 8-9. «Բագում արք անուանիք և իմաստութեան պարապեալք ի Յունաց աշխարհէն՝ հոգացան ոչ միայն զգիրս գիւանացն այլոց ազգաց թագաւորացն և գմեհնիցն յեղով ի յոյն բան... և ուրեք ուրեք գտեալ աշխատութեամբ, հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու, որպէս զԱստեղաբաշխութիւն) առ Ք(աղոգացիս), և զԹ(ուականութիւն) առ Փ(իւնիկեցիս) և զԵ(րկրաչափութիւն) առ Ե(գիպտացիս)»:

88 Սույն պարբերութեան շղագիր բերված նախագաւառությունը Սիմեոն Մետափրաստեսի բնագրում բացակայում է:

89 Ավելորդ չէ հիշեցնել, որ Գրիգոր Մագիստրոսը Սարգիս վարդապետին գրած նամակում ասում է. «ոչ ենք երբէք գագարեալ ի թարգմանութենէ և ս. րազում մատեանս, զորս ոչ ենք գտեալ ի մեր լեզուս՝ զերկուս մատեանսն Պլատոնի, զՏիմէոսի տրամաբանութեան և զՓեղովնի յորս բոլոր ճառսն նախագիտականին այն պարփակեալ կա» (Գրիգոր Մագիստրոսի Թղթերը. Բնագիրն յառաջաբանով և ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Այեքսանդրապոլ, 1910, էջ 66: «Առ Իբրահիմ ամիրայն վասն հաւատոց» գրած մանրամասն և հանգամանալից թղթում նա հանդես է գալիս այն գերում, ինչ Եվստրատիոսը հեթանոս Ագրիկոլայոսի: Նա Իբրահիմ ամիրայնի գրում է. «Այժմ կամէի կարճաօտ հատանել, սակայն հարկաւորեցայ ի դիմի խնդրոյս քո երկարագոյնս գրել: քանզի գրեցեր առ իս երկարագոյն գրել առ քեզ, և պղատոնականս և այն անյամր և փութանակի և առանց հակառակութեան» (էջ 173): Գրիգոր Մագիստրոսը շարադրում է Պլատոնի գաղափարները ըստ վերոհիշյալ երկի. «այլ ի Տիմիոսի տրամաբանութեանն այսպէս և ըստ այսմ օրինակի ասէ. յետ առնելոյ արարչին զերկին և զերկիր

լայոսը ընդդժոճում է Պլատոնի ասածն այն մասին, որ փիլիսոփան դնացել է Պիրեևս հեթանոսաց աստծուն աղոթելու (հունարեն բնադրում աստվածուծոթյունը իգական հոգով է նշված՝ ԴԴ ΘԵΩ): Սրան Եվստրատիոսը պատասխանում է. «Յոյժ բամբասէ Պղատոն զաստուածն քո Արամազդ» (հունարեն բնադրում՝ Զևս - էջ 462): Եվ սուրբն այստեղ հենց Պլատոնի, ապա նաև Հին հունական հեղինակությունների (Հոմերոս, Հեսիոդոս) երկերի հիման վրա ցույց է տալիս հեթանոսների գլխավոր աստվածուծոթյան, նրանց կողմից «աստվածների և մարդկանց հայր» համարված Զևսի ոճրագործ և բարոյագուրկ լինելը: Զևսը հայրասպան է (նա սպանել է իր հորը՝ Կրոնոսին), մահկանացու կնոջ հետ հարաբերվելու համար ստացել կարապի կերպարանք (ավելացնենք, որ Եվրոպա անունով կուսին առևանգելու համար ստացել էր և ցլի կերպարանք: Զևսը նաև միասեռական է, մահկանացու պատանի Գանիմեդեսի հետ հարաբերվելու համար առևանգել է նրան, ստանալով արծվի կերպարանք), ուստի ինչպե՞ս կարելի է աստված համարել այդպիսի մեկին: «Վասն որոյ, - ասում է Եվստրատիոսը, - յիրաւի Պղատոն մախացեալ ընդ նմա թշնամանէ զաստուածն քո Զևս» (էջ 462-463): Եվ դա դեռ բոլորը չէ: Զևսը ողբում է Տրոյական պատերազմում զոհված իր որդի Սարպեդոնին: Ինչպե՞ս կարող է գլխավոր աստվածությունը թույլ տա, որ մահկանացու կնոջից ունեցած իր որդին սպանվի և ինքը ողբա, այն էլ «կանացի մոլեգնությամբ հափշտակված»:

Հայերեն բնադրում կա ընդարձակ մի նախադասություն, որից լուրջ փոքր հատվածներ կան Սիմեոն Մետափրաստեսի տեքստում: «Ապա եթէ ինքն Պղատոն, - ասում է Եվստրատիոսը Ագրիկոլայոսին, - չարադրող իմաստութեանն ձեր հրաժարեաց գոլ ընդ այնմ, որ ղերկնի և ղերկրի հանգամանս որսլիսութեանն քննեաց, և ի ծայրս բոլորակցութեան արհեստիցն հասեալ եղև, ամենայն հիդութեան առիթ զսա գոլ, ասէ, և դրսովանս յամենեցունց առ սա ձգեալ վատթարագոյն խենեշուութեամբ ի մէջ կացուցանէ, դսորին բղջախոհական անիրաւութիւնսն, անդնդային չարահոտ գառնութեանն, անյագ վաւաշոտութեանն յապականութիւն ջրհեղեղեալ, զոր հրամայեն ոչ միում ումեք ի մարդկանէ որ առաքինութեան փոյթ ունիցի նմանող լինի ախտից նորա այլ մանաւանդ մեռելութիւն բացագործել ախտից, և նմանել Աստուծոյ, ըստ կարողութեան մարդկան և զիա՞րդ կամ որպէ՞ս զոր նորա ըմբռնեալ եղեն գործովք և անհանճար մտօք, ստորանկեալ լինիք և դուք յայնոսիկ, և զմեզ հարկէք այսօր ստայօդ ոչէիցն և ապականադործ մանկամոլին և դիւանուէր անշունչ պատկերացն երկիր պագանել» (էջ 463): Ընդգծվածը Սիմեոն Մետափրաստեսի մոտ չկա: Նա կրճատել է նաև հայերեն թարգմանության մեջ առկա 464-րդ էջի վերջին տասը տողը և ամբողջ 465-րդ էջը:

Հայերեն թարգմանության մեջ այնուհետև մեջբերվում են Հերմես (Եռամեծի), Եվրիպիդեսի, Հուսիոսի, Արիստոտելի (որ «ըստ պղատոնականին հետևիւր բանից») ասույթները, հերթականությամբ քննադատության են ենթարկվում հունական պանթեոնի արական սեռի աստվածները՝ սկսյալ

հրատարակէր առ իմանալի գօրութիւնս, եթէ երկին անկատար, երկին կոչէ զաշխարհ ի պարունակէն, և եթէ այլևս երեք սեռք մեզ անեղանելիք, որոյ ոչ եղելոյ երկին անկատար, յորոց և մարդս» (էջ 179):

Արամազդից (Ջևս), որին «Հայր աստուածոց ասէք լինել, զայն որ սպանութիւն և զապականութիւն և զգիւհար ալակերպութիւն և զախտս ամենայն գիջութեան չարեաց զկնի իւր թողեալ յիշատակ», Պոսիդոնին, «զոր ասէք արարիչ ջրոյ և գոյացուցիչ ծովու, և զդիւարնական զԱպողովն՝ կոչէք Հաւասար և Հանգունակից արեգական և ոչ ամաչէք», Դիոնիսոսին, «զոր մայր արեցութեան անուանէք զնա և երկրպագէք նմա՝ նիւթ ախտի ցանկութեան», և Հեփեսոսին «պարգևիչ Հրոյ ասէք»: Եվստրատիոսը գտնում է, որ Աստված միայն բարին է գործում, նա ոչ մի չար բան չի գործել և չի գործում:

Արան Հաջորդում է ընդարձակ մի հատված, որ Սիմեոն Մետափրաստեսի ընդգրկում բացակայում է, հավանաբար նրա կողմից կրճատված: Եվստրատիոսը խոսում է Աստծո՝ «անհասանելի, անքննելի, անսահման, անայլալելի, անպարտելի, անապական» լինելու մասին, որ գոյություն չունեն «աստուածք մեծագոյնք և նուազք», քանզի Աստված է «անբաղգատելի զօրութեամբ միացեալ, և զմիակամ զաստուածութիւնք ունելով», որ «մեծ և Հրաշալին Պղատովնիոս՝ տրամագրէ յիւրում տրամարանական մատենին և ասէ այսպէս. եթէ՝ Գերակատար գութս, արարչական զօրութիւնն և զբնաւս տածէ մակաւասար բնութիւնն, և վերոյ կալով ամենայնին խնամէ, և զամենայն տեսանէ, և ինքն յումեքէ ոչ տեսանի, այլ անցեալ կա սարաւանդեալ յիւրում առանձին բարձրութիւնն» (էջ 464-465):

Արա փոխարեն Սիմեոն Մետափրաստեսի ընդգրկում հանդիպում է բավականին ընդարձակ մի հատված, հավանաբար իր կողմից ավելացված, որում, հաստատելու համար միաստվածութեան զաղափարը, համառոտ շարադրում է Հին Կտակարանի Ծննդոց գիրքը՝ Աստծո արարչադործություններ, համաշխարհային ջրհեղեղը, և հետագայում, երբ «բազմացան մարդկանց մեղքերը», ինչպես Աստված, գթալով մարգկությունը, ուղարկեց իր որդուն՝ Հիսուս Քրիստոսին այն փրկելու: Եվստրատիոսը իր պաշտպանական ավարտում է հետևյալ նախադասությամբ, որը հայերեն թարգմանությունում մեջ բացակայում է. «Այս ամենը համառոտ գծերով շարադրեցի, որպեսզի քո (իմա՝ Ագրիկոլայոսի – Հ. Բ.) իմաստուն Պլատոնի ասածներին հավատաս և ինձնից ճշմարտությունն ուսանես, հրաժարվես քո Հայրասպան Ջեսից՝ վավաշոտ կարպից, իր զավակների մահվան առթիվ աղիողորմ ողբացողից» (սյունակ 500):

Վերոհիշյալ հատվածի փոխարեն հայերենն ունի ընդամենը հետևյալ նախադասությունը, Եվստրատիոսի փորձի մասին «որսալու» Ագրիկոլայոսին: Նա ասում է. «Արդ, ո՛վ գատաւոր, եթէ հաւանեսցիս լսել որ ինչ յազգս ճշմարտութեան Աստուծոյ իմոյ պատմութիւն է՝ կենսաբեր տնօրէնութեան, կարծեմ թէ իսկոյն վրէժխնդիր լինիցիս նմա, և արժամայն խորտակեսցես փութանակի զդիւաճոյլ պատկեր աստուածոց քոց, և զերծեալ ի խաւարային ժանեաց վիշապին, անկցիս յուռկան»<sup>90</sup> կենսաբեր աւետարանին երկնից արքային» (էջ 465):

90 Ակնարկ Մատթեոսի Ավետարանի 4.18-21 (Հմմտ. Մարկոս 1.16-19). «Մինչդեռ դնայր Յիսուս ընդ եզր ծովում Գալիլեացոց ետես երկուս եղբարս, զՍիմոնն զկոչեցեալն Պետրոս և զԱնդրէաս եղբայրն նորա, արկեալ ուռկան ի ծով, քանզի ձկնորսք էին. եւ ասէ ցնոսա. Եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան»:

Հավանաբար Եվստրատիոսին թույլատրվել է շարադրելու իր դադափարները, այդ մասին է վկայում Ագրիկոլայոսի ասածը. «Ո՛վ Եւստրատիէ, զամենայն շաղփաղփանս յօղուածոց յիմարութեան անյարմար բանիցդ զոր ուսեալ ես ի մանկութենէ, և ոչ կարացեալ երբէք իմանալ զօղտակար շահիցդ յիմաստնոյ խրատուց, այլ զոչ պատշաճս և զվնասակարն քեզ իմացեալ, զոր երկրորդել իշխեցեր առաջի իմ, կամեցեալ առ փոքր մի քարշել զմեզ առ կրօնս քո. և զայդ ոչ իմացեալ ծանեար թէ ամենայն բանք բերանոյ քո զոր խօսեցար՝ առասպել համարեալ են առաջի աչաց իմոց» (էջ 466): Ագրիկոլայոսը ավարտում է բանավեճը ասելով. «Արդ յայսմ հետէ ոչ ևս ներէ քեզ ատեանս մեր, և հրաման ինքնակալին խօսել ինչ յաղազս Աստուծոյն քո զոր խոստացար ճառել. զի ոչ եմք բաւական զմեծաց և զաստուածայնադոյն թագաւորաց մերոց զառաքինութիւնս բամբասել, այլ յամենայնի հպատակ լինել նոցա. վասն որոյ թողեալ քո զամենայն վիպասանութիւն պատմութեանց քոց, և ի բաց կացեալ յընդդիմաբանութեանցդ՝ անկեալ երկիր սլազ և զոհեա աստուածոց ինքնակալին» (էջ 466): Ընդդիմվածները Միմեոն Մետափրաստեսի բնագրում բացակայում են: Հայերենը այստեղ ևս մեկ կայսեր մասին է խոսում և ոչ երկու՝ ինչպես սկզբում Մետափրաստեսը:

Ավարտելով տվյալ հարցի մասին մեր խոսքը, կարող ենք վստահ արձանագրել, որ Հայ իրականության մեջ նեոսլատոնական կոնցեպցիան առկա էր Եղիշեից երկու դար առաջ և այն վերաբերում էր քրիստոնեական ապոլոգետիկայի ուղղությանը: Սուրբ Եվստրատիոսի՝ Ագրիկոլայոսի կողմից հարցաքննվելու ընթացքում արտահայտած մտքերը ոչ այլ ինչ են, քան նեոսլատոնականության քրիստոնեական ապոլոգետիկային վերաբերող դատողություններ:

Հայոց գրերի դյուտը V դարի սկզբին և հայերեն լեզվով գրված երկերի հանգես դալը դեռ չի նշանակում, որ Հայաստանում (նկատի ունենք մարդպանական Հայաստանը) չէր կարող գոյություն ունենալ նեոսլատոնականության փիլիսոփայության հոսանքը, հատկապես եթե նկատի ունենանք, որ գեռևս քրիստոնեությունից պետական կրոն հռչակվելուց առաջ Փոքր Հայքում այն լայնորեն տարածված էր: Ինչպես տեսանք, սուրբ Սևերինոսին մահապատժի դատապարտած Լյուսիաս դուքսը, դիմելով նրան, ասում էր. «Ես առն հռետորի և փիլիսոփայի քաջաբանութիւն տեսանեմ ի քեզ»: Այդպիսի հռետոր և փիլիսոփա պիտի համարել և սուրբ Եվստրատիոսին՝ արավրակացի Տեր Հուսիկին: Փոքր Հայքը և Մեծ Հայքը իրարից չինական պարսպով բաժանված չէին, նեոսլատոնականության դադափարները Փոքր Հայքից կարող էին Մեծ Հայք մուտք գործել V դարի կեսից շատ առաջ: Եվ ոչ միայն նեոսլատոնականության դադափարները: Մեծ Հայքում շատ լավ տեղյակ էին Փոքր Հայքում տեղի ունեցած անցքերին: Եթե նրանք V դարում թարգմանեցին Փոքր Հայքի իրենց քրիստոնյա հայրենակիցների վարքերն ու վկայաբանությունները, ասել է՝ շատ լավ գիտեին այդ մասին:

Եվստրատիոս-Ագրիկոլայոս, քրիստոնյա-հեթանոս անձանց միջև զննացած վեճը, որ հռոմեական մանրախնդրությունը գրի էր առնված, մի քանի տասնամյակ անց, երբ քրիստոնեությունը Հռոմեական կայսրության սահ-

մաններում պետականորեն ազատութուն ստացավ, անցավ վկայաբանութունը շարադրողի ձեռքը և նրա միջոցով հասավ մեզ: Եվստրատիոսը միակը չէր, ով դավանում էր այդ գաղափարները, նա տվյալ մտքերը արտահայտում էր արդեն հասուն տարիքում և ժառանգել էր գեո երիտասարդ հասակում իր հորից:

Եվստրատիոս-Ազրիկոյանս բանավեճը հանգամանորեն և մասնադիտորեն կուսումնասիրեն և կարժեքավորեն Հայ փիլիսոփայության պատմության մասնագետները: Նախագգուչացենք միայն, որ նրանց առջև բարձրանալու է նախ և առաջ այդ բանավեճի հրատարակված բնադրի սրբադրության անհրաժեշտութունը: Թարգմանության 1874 թ. ինձ անձանոթ հրատարակիչը փիլիսոփա-մասնագետ չէր<sup>91</sup>:

\* \* \*

Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարութունները շրջանակներում գարձյալ հրապարակ ելավ Հ. Մանանգյանի, Պ. Անանյանի, Գ. Սարգսյանի, Լ. Խաչիկյանի, Պ. Մուրադյանի կարծիքն այն մասին, թե Հայոց դարձը չէր կարող 301 թ. լինել, այլ 313-ից՝ Միլանի էգիկտի հրապարակումից հետո, այն է՝ 314-ին: Այդ կարծիքին է և Կ. Յուզբաշյանը, որը Ասնկտ-Պետերբուրգի Պետական համալսարանի Արևելյան ֆակուլտետի վերջերս հրավիրած Միջազգային գիտական կոնֆերանսում, նվիրված Հայաստանում քրիստոնեության 1700-ամյակին, նպատակահարմար գտավ մեկ անգամ ևս հայտարարել, թե «Հայոց եկեղեցին դարձր թվագրում է 301-ով: Այնինչ 299 թվականից և IV դարի մի քանի տասնամյակների ընթացքում Հայաստանը դառնում էր Հռոմեական կայսրության պրոտեկտորատի ներքո: Քիչ է հավանական, որ այն ժամանակ, երբ հենց կայսրության սահմաններում քրիստոնեութունը դաժան հալածանքների էր ենթարկվում, Հայաստանում այն հռչակվեր պետական մակարդակով: Ինչ վերաբերում է 314 թվականին, ապա այդ թվականը երևում է բավականին հիմնավորված»<sup>92</sup>:

Սակայն Կոստանդին Մեծին վերագրվող, այսպես կոչված, Միլանի 313 թ. էդիկտը (կամ նրա կայսերակից Լիկինիոսի՝ Նիկոմեգիայի կառավարչին հասցեագրված պաշտոնական կարգազրույցները քրիստոնեության ազատ դավանելու իրավունքի վերաբերյալ) դեռևս չէր նշանակում Հռոմեական կայսրության մեջ քրիստոնեության պաշտոնական կրոնի հռչակում<sup>93</sup>: Կոստանդին Մեծ կայսրը իր մահվան (337 թ.) նախօրեին զոհ մատուցեց հեթանոսական աստվածներին, այսինքն կայսրության պետական կրոնը հեթանոսութուն էր: Նման պարագայում կայսրութունը թույլ կտա՞ր

91 Նշեմ մի օրինակ միայն. «...իսկ Հերմէս՝ մեծ շարժող զնա և տաճող և անեղ կամեցաւ ասել» (էջ 465): Ուղղելի՛ «Հերմէս եռամեծ»: Նույն սխալը հանդիպում է Գրիգոր Մագիստրոսի թղթերի հրատարակության մեջ. «Եւ Հերմեոսս մեծ շարժող զնա և տաճող և իմանալի աշխարհ» (էջ 182): Ուղղելի՛ «Հերմէս եռամեծ» (հուն. Ἑρμῆς τρισμέγιστος):

92 К. Н. Ю з б а ш я н. Основные этапы становления Армянской церкви. Санкт-Петербургский Государственный университет, Восточный факультет. Международная научная конференция "Армения и Христианский Восток", 27 – 30 июня 2001. Тезисы докладов, с. 52.

93 Ա. Մ ա Ր տ ի Ր ո ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 20:

Տրդատ III-ին և Գրիգոր Լուսավորչին որ «իր պրոտեկտորատում» հեթանոսական տաճարները քանդեն, հեթանոսական աստվածների արձանները տապալեն, քրմերին հալածեն: Այնպես որ գիտական նորութունն անելու կեցվածքը դեռ գիտութունն է, իսկ 301 թ. 13 տարով երկարաձգելու տեղաշարժը սնանկ է:

Վկայաբանության մեջ հանդիպող հունա-հռոմեական տերմինների  
մասին

Ինչպես շարադրանքում նշեցինք, հունա-հռոմեական տերմինների հարցում ստիպված ենք դիմելու Միմեոն Մետափրաստեսի հունարեն բնագրին, քանի որ հայ թարգմանիչը չիմանալով դրանց իրական նշանակությունը կամ հետևելով սրբոց թարգմանչաց որդեգրած սկզբունքին, ջանում է թարգմանել կամ իմաստավորել՝ ոչ միշտ ճիշտ:

Վկայաբանության գլխավոր գործող անձը սուրբ Եվստրատիոսն է, որ մինչև իր նահատակության տարին վարել էր երեք պաշտոն: Նախ, «երբ դեռ պատանի էր», եղել էր *ecseptor* (սյունակ 473): Տերմինը լատիներեն է, հունարեն բնագրում բերված է հունարեն գրությամբ՝ ἑκσεπτωρ: Հայաստանի դքսի, ինչպես մնացածների, իրավասության ներքո առկա էր ծառայողների մի խումբ, որը կազմում էր նրա *officium*-ը, այն է՝ քարտուղարութունը: *Officium*-ը գլխավորում էր *princeps*-ը՝ քարտուղարության վարիչը: Քարտուղարութունը բաժանված էր բաժինների, որոնք *scrinia* էին կոչվում և վարում էին տարբեր բնագավառների գործունեությունը: *Ecseptor*-ներն ահա, գործադիր օրգաններ էին: Վկայաբանության հայերեն թարգմանության մեջ բառը չի թարգմանված և բերվում է հունարենի սեռական հոլովում «ղեկավարություն» (էջ 442): Մ. Ավդերյանը տալիս է բացատրություն. «Այն է ըստ հռոմայեցեաց էքսչեփոր, որ է դպիր կամ նօտար ատենի՝ գրիչ բանից թելադրելոց նմա ի զօրագլխէն կամ յատենակալէն» (Լիակատար վարք, հ. Թ, էջ 491):

Եվստրատիոսն ապա «դքսական դասի սկրինիարիոսն էր» (*σκριναριος τῆς δουρικῆς ταξείως*): *Τάξις*-ը հայերեն թարգմանված է ճիշտ՝ բայց տառացի՝ «դաս»: Մի այլ տեղում *τάξις*-ը (սյունակ 473) թարգմանված է «գունդս զինուորացն» (1813, էջ 491, 1874, նույնը): Բառը նշանակում է «զորամաս», որով դքսին ենթարկվող զորամասի սկրինիարիոս, քարտուղարության ծառայող: Վկայաբանության 1813 և 1874 թթ. հրատարակություններում սկրինիարիոսը թարգմանված է «իշխան»:

Վերջապես, իր նահատակության տարին Եվստրատիոսը, ըստ Մետափրաստեսի բնագրի, *κομენტαριῶσιος* էր (լատ. *commentariensis* բառացի՝ քարտուղար), քրեական գործերի (հասկանալի է զինվորական բնագավառի) բաժնի վարիչը (տե՛ս Ն. Ա. դ. ո. ն. ց. նշվ. աշխ. էջ 120): Հայաստանի դքսի տրամադրության տակ էին գտնվում, ըստ 404 թ. կազմված (*Notitia dignitatum et administrationum omnium tam civilium quam militarium in partibus Orientis et Occidentis*) նաև *commentariensis*-ներ (Ն. Ա. դ. ո. ն. ց. նշվ. աշխ., էջ 114): Հայերեն թարգմանության մեջ բառը չի թարգմանված,

սոսկ ասված է «զօրական», բայց «անյաղթ թագաւորին Քրիստոսի» (էջ 440, Վարք և վկայաբանութիւնք. հ. Թ, էջ 488):

Աբ. Եվգենիոսը համարվում է սբ. Եվստրատիոսի գլխավորած ταξις-ի (դասի) ὀφφικιάλιος (լատ. officialis - ծառայող):

Դուքս Լյուսիասը նշանակված էր գլխավորելու բոլոր լիմիտանեոսներին (πάντων τῶν λιμιτανέων ἐπιτροπεύειν, սյունակ 469), և պատահական չէ, որ նա հաստատվեց Սատաղ քաղաքում, որն իրոք սահմանային քաղաք էր Փոքր և Մեծ Հայքի սահմանագլխին: Լիմիտանեոս նշանակում է սահմանապահ, սահմանապահ զորք: Մ. Ավգերյանը բուն տեքստում մանրամասն մեկնաբանում է. «Լիւսիաս էր կարղեալ ի գքսութիւն համօրէն սահմանացն այնոսիկ իբրև մարզպան կուսակալ և զօրավար՝ որ ի հովմայեցւոց կոչէր դուքս լիմիտանէոս, որպէս թէ սահմանապետ» (էջ 483): Բյուզանդական շրջանում (VII դարի վերջից) նրանց փոխարինելու եկան ակրիտաները (հունարեն՝ ἀκραι - ակրա - «սահման» հունարեն բառով անվանված): Որպես կանոն հաստատված էին արարա-բյուզանդական սահմանի վրա և իրենց ծառայութեան դիմաց հողեր էին ստանում ի սեփականութիւն: Նիկեփոր II կայսեր (963-969 թթ.) վերագրված մի երկում մանրամասն խոսվում է նրանց մասին, և համարվում են հայազգի (տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին 6, Բյուզանդական աղբյուրներ, գիրք Բ, Կոստանգին Ծիրանածին, էջ 201-202): Այգպիսիք պիտի լինեին և Փոքր Հայքի Սատաղ քաղաքում տեղակայված Լյուսիաս դքսի լիմիտանեոսները՝ հայազգի:

Նշենք այստեղ, որ վկայաբանութեան մեջ ասված է նաև, որ Լյուսիասին և Ագրիկոլայոսին հանձնարարված էր «ὑπηρετεῖσθαι τε αὐτοῖς οὐ μόνον τὴν τῶν λιμιτανέων χεῖρα θεσπίσας, Ἄλλὰ καὶ ἅπαν τὸ στρατιωτικόν, τὸ ἐν ταῖς πηλοσιάζουσαι πόλεσι καθιδρυμένον» (սյունակ 469), այսինքն՝ «ղեկավարեն ոչ միայն սահմանապահներին (լիմիտանեոսներին) զորքը, այլև մերձակա քաղաքներում տեղակայված ամբողջ զորքերն ընդհանրապես»: Վկայաբանութեան 1874 թ. հրատարակութիւնում (էջ 436) հիշյալ նախադասութեան գիմաց ունենք հետևյալը. «և զղինուորութիւն ամենայն գնդիցն որ ի միջերկրեայսն և ի մերձակայ դաւառսն բնակեալ էին»: Ըստ հայերեն թարգմանութեան այդ պաշտոնը տրվել էր միայն Լյուսիասին, իսկ ըստ Մետափրաստեսի՝ երկուսին էլ, նաև Ագրիկոլայոսին: Մ. Ավգերյանի հրատարակութեան մեջ նույնպես այդ երկուսն են նշանակված. «սլատուէր ունելով՝ զի ձեռնտու լինիցի սոցա և զինուորութիւն ամենայն արքունի գնդիցն, որ ի միջերկրեայսն և ի մերձակայ դաւառսն բնակեալ էին, և կոչէին ձեռն լիմիասցի, այսինքն՝ սահմանագունդ» (էջ 483): Ընդգծվածը Մ. Ավգերյանի ավելացրածն է: «Արքունի» բառը 1874 թ. հրատարակութիւնում բացակայում է: Մի այլ տեղում, ուր ասված է Ագրիկոլայոսի մասին, թե կայսրը Ագրիկոլայոսին նշանակեց գլխավորելու ամբողջ նահանգի իշխանութիւնը (սյունակ 469), 1874 թ. հրատարակութիւնում թարգմանութիւնն է. «Ագրիկոլայոս, որոյ ամենայն աշխարհաց զգատաւորական իշխանութիւն ընձեռնեալ էր» (էջ 436), իսկ 1813 թ. հրատարակութիւնում՝ «Ագրիկոլայոս, որում տուեալ էր դատաւորական իշխանութիւն այն աշխարհաց» (էջ 483):

«Դուքս» (δούξ) բառը որպես կանոն չի թարգմանվում, բայց առանձին ղեկավարում հանդիսանում է «րգեչխ»:

Πραιτωριον-ը (սյունակ 472) և 1813, և 1874 թթ. հրատարակություններում թարգմանված է «ապարանք իշխանին»: Բառը լատիներեն է praetorium, որ բազմաթիվ նշանակություններ ունի. զորահրամանատարի վրանը, նրա շտաբը, զորավարին կից զինվորական խորհուրդը, փոխարքայի նստավայրը, կայսերական գվարդիան, պալատ: Մեր ղեկավարում նահանգապետի ապարանքն է, նստավայրը, և այն հանգամանքը, որ Եվստրատիոսը ծառայում էր դքսի ապարանքում, ընդգծում է նրա բարձր գիրքը: Սուրբ Եվգենիոսը ծառայում էր նույն ապարանքում՝ Եվստրատիոսի հրամանների ներքո:

Δημοσία φυλακή, որ պետական բանտ է նշանակում, հայերեն թարգմանված է «հանդիսական բանտ» (1813, էջ 488, 1874, էջ 440):

ХРИСТИАНСТВО В МАЛОЙ АРМЕНИИ.  
НАЦИОНАЛЬНО-РЕЛИГИОЗНОЕ И СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКОЕ  
ПОЛОЖЕНИЕ В ПРОВИНЦИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ III ВЕКА  
(По мартирологиям святых IV века)

ՐԱՇ ԲԱՐՏԻԿՅԱՆ

Р е з ю м е

Начиная с V века, со времени создания армянской письменности и по сей день, о христианстве в Армении написано очень много, однако все источники и исследования касаются христианства в Великой Армении. Мартирологий святых Евстратийцев (Евстратия, Евгения, Авксентия, Ореста и Мардария) свидетельствует, что новая религия охватывала все социальные слои Малой Армении. Мартирологий был написан скорее всего в первой половине IV в., в V в. переведен на армянский. Греческий оригинал дошел до нас в редакции Симеона Метафраста (X в.), а первоначальный текст сохранился в древнеармянском переводе. Географический ареал событий — Малая Армения — города Араврака, Сатала, Никополь, Севастия. Согласно данным мартирология, Малая Армения и Каппадокия до начала гонений христиан императором Диоклетианом, были целиком христианскими. Этими провинциями руководили представители местных этносов — армян и каппадокийцев, которые приняли христианство в стремлении сохранить свою национальную самобытность, не поглотиться водворотом римской цивилизации. Борьба империи против "национальной автономии" названных областей шла под прикрытием гонений христиан. Местные руководители были отстранены и вместо них назначены лица "из страны греков" — Лисий и Агрикола. Касаясь этнической принадлежности святых, можно отметить, что у главного мученика два имени — греческое Евстратий и армянское Хусик. Мардарий говорил со своей женой по-армянски. Стало быть мученики были армянами по национальности. В мартирологии подробно говорится о догматическом споре между Агриколаем, человеком весьма сведущим в "родной", т.е. языческой науке и Евстратием. Последний защищает новую религию



с позиций неоплатонизма. Это философское течение проникло в Великую Армению именно из Малой Армении. В дискуссии с Агриколаем Евстратий говорит, что исповедует христианство с младенческих лет, что он вырос в христианской семье, а пресвитер Авксентий, отвечая Лисию, говорит, что он с детства христианин. Стало быть – с середины III в.

CHRISTIANITY IN ARMENIA MINOR.  
THE NATIONAL-RELIGIOUS AND SOCIAL-POLITICAL SITUATION IN THE  
PROVINCE IN THE SECOND HALF OF THE 3rd CENTURY  
(Based on the Martyrologies of Saints of the 4th century)

*HRACH BARTIKYAN*

S u m m a r y

Since the 5th century, starting with the creation of the Armenian alphabet and up today, it is written a lot about the Christianity in Armenia, but all the sources and investigations concern the Christianity in the Great Armenia. However, the Martyrology of the Saint Eustratians (Eustratios, Eugenios, Auxentios, Orestes and Mardarios) proves that the new religion covered all the social groups of Armenia Minor. Most likely, the Martyrology was written in the first half of the 4th century and was translated into Armenian in the 5th century. The Greek original has reached us in the edition of Simeon Metaphrastes (10th c.) and the initial text is kept in the old-Armenian translation. The place of the events is Armenia Minor, the Arauraka, Satala, Nikopolis, Sebasteia cities. In accordance with the Martyrology, before the persecutions of Christians by the emperor Diokletian, Armenia Minor and Cappadocia were entirely Christian. These provinces were administrated by the representatives of the local ethnoses - Armenians and Cappadocians, who had accepted Christianity with the purpose of saving their national originality, aiming not to be swallowed by the vortex of the Rome civilization. The struggle of the empire against the "national autonomies" was carried out under the cover of the persecutions of Christians. The local leaders were removed and the persons "from the Greeks' country", Lysias and Agricolaus, were assigned instead of them. Coming to the nationality of the Saints, we can say that the senior martyr has two names, Greek - Eustratios and Armenian - Housik. Mardarios spoke with his wife in Armenian. So, the martyrs were Armenians by nationality. The dogmatic dispute between Agricolaus, who was deeply experienced in "own", i.e. pagan science, and Eustratios, is described in the Martyrology in details. The latter defends the new religion from the position of neoplatonism. This philosophical movement permeated into Great Armenia exactly from Armenia Minor. During the dispute with Agricolaus Eustratios says that he confesses Christianity since childhood, that he grew up in a Christian family, and the presbyter Auxentios answering Lysias says that he is Christian since childhood, therefore since the middle of the 3rd century.